Իրավունքների Պաշտպանություն
Առանց Սահմանների ՀԿ

Ժողովրդավարության
զարգացման
հիմնադրամ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՆ

2023թ. հուլիս-2024թ. օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում քննված վարույթների ուսումնասիրություն

Սույն զեկույցի պատրաստումը հնարավոր է դարձել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի օժանդակության շնորհիվ՝ «Արդարացի դատաիրավական բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում: Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

Զեկույցի հեղինակներն են Հասմիկ Հարությունյանը և Դիանա Հարությունյանը: Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթների մշտադիտարկումն իրականացրել է Դիանա Հարությունյանը: Զեկույցը խմբագրել է Արաքս Մելքոնյանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 4

1. ԴԻՏԱՐԿՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 5

1.1. Կարգապահական վարույթ հարուցող մարմիններ 6

1.2. Վարույթ հարուցելու առիթները 9

1.3. Վարույթ հարուցելու հիմքերը 11

1.4. Միջնորդությամբ բարձրացված ենթադրյալ խախտման հակիրճ նկարագրությունը 12

1.5. Կարգապահական ենթադրյալ խախտման մեղքի ձևը՝ ըստ վարույթ հարուցող մարմնի 17

1.6. Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները և վարույթի տևողությունը, դատավորի բացատրությունը 17

2. ՎԱՐՈՒՅԹԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ 19

2.1 Խորհրդին ներկայացված միջնորդությունները 21

2.2 Վարույթի տևողությունը և նիստերի քանակը ԲԴԽ-ում 23

2.3 Վարույթի հրապարակայնությունը ԲԴԽ-ում 24

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 25

3.1 Խորհրդի որոշման հիմնավորվածությունը 26

3.2 Մեղքի ձևի որակում և հիմնավորում 28

3.3 Կիրառված կարգապահական տույժի տեսակները 32

3.4 Կարգապահական տույժի հիմնավորվածությունը 33

3.5 Բարձրագույն դատական խորհրդի անդամների հատուկ կարծիքները 40

4. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 43

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 47

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 49

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դատավորների կարգապահական պատասխանատվությունը դատական իշխանության անկախության, արդյունավետության և հաշվետվողականության ապահովման կարևորագույն ինստիտուտներից է, որը պետք է իրականացվի օրինականության, դատական գործունեությանը չմիջամտելու, դատավորների անկախությունը հարգելու և հեղինակությունը բարձր պահելու, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության, կամայականության բացառման սկզբունքների հիման վրա։

Հաշվի առնելով դատավորների կարգապահական պատասխանատվության վարույթների քննության նկատմամբ հանրային վերահսկողության և Բարձրագույն դատական խորհրդի և կարգապահական վարույթ հարուցող մարմինների հաշվետվողականության ապահովման անհրաժեշտությունը, ինչպես նաև դատավորների կողմից թույլ տրվող խախտումների բնույթի և ցուցաբերվող վարքագծի ուսումնասիրության անհրաժեշտությունը՝ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից տարիներ շարունակ իրականացվում է դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործընթացների մշտադիտարկում և կայացված որոշումների ուսումնասիրություն։

Սույն հետազոտությունն ամփոփում է Բարձրագույն դատական խորհրդի (հետայսու Խորհուրդ) կողմից 2023 թվականի հուլիս ամսից մինչև 2024 թվականի օգոստոս ամիսն ընկած ժամանակահատվածում քննված 12 վարույթների մշտադիտարկման ու կայացված որոշումների ուսումնասիրության արդյունքները։ Զեկույցում վերհանված օրենսդրական և գործնական խնդիրների առնչությամբ ներկայացվում են նաև առաջարկություններ։

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ վարույթները ուսումնասիրվել են և՛ Խորհրդում՝ նիստերի մշտադիտարկմամբ, և՛ Խորհրդի կողմից կարգապահական վարույթների վերաբերյալ կայացված որոշումների բովանդակային վերլուծությամբ։

<u>Մշտադիտարկում.</u> Նշված ժամանակահատվածում Կազմակերպության ներկայացուցչի կողմից մշտադիտարկվել են դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 12 վարույթներ՝ վարույթներով տեղի

ունեցած 28 դռնբաց նիստերը, որոնց ընթացքում հավաքագրվել են ուսումնասիրության համար անհրաժեշտ և վարույթների քննությանը վերաբերող տեղեկությունները։

Որոշումների ուսումնասիրություն. Կազմակերպության կողմից ուսումնասիրվել են ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակված Խորհրդի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ համապատասխան որոշումները։

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ վարույթների մշտադիտարկման և Խորհրդի որոշումների ուսումնասիրության արդյունքում դուրս բերված տվյալների վերլուծությունը կատարելու համար Կազմակերպության կողմից մշակվել է հարցաշար, որը ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական տվյալների վերլուծության գործիքակազմ։

1. ԴԻՏԱՐԿՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Մշտադիտարկված կարգապահական 12 վարույթների շրջանակներում ներգրավված են եղել 15 դատավորներ, որոնցից 8-ը արական սեռի ներկայացուցիչներ, 7-ը՝ իգական։ Ընդ որում, 1 վարույթով ներգրավված են եղել 4 դատավորներ՝ 2-ը արական, 2-ը՝ իգական սեռի ներկայացուցիչներ։

Դիտարկված վարույթներից 5-ը հարուցված են եղել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում պաշտոնավարող դատավորների նկատմամբ։ Մյուս վարույթներով ներգրավված դատավորները պաշտոնավարել են համապատասխանաբար՝ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանում, Արմավիր մարզի ընդհանուր իրավասության դատարանում, Սնանկության դատարանում, Հակակոռուպցիոն դատարանում, Վարչական դատարանում, Վերաքննիչ քրեական դատարանում և Վճռաբեկ դատարանում՝ քաղաքացիական պալատում և վարչական պալատում։

Աղյուսակ 1. ԲԴԽ կողմից քննված կարգապահական վարույթների քանակը՝ ըստ դատարանների

Դատարան	Վարույթների քանակ
Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան	5
Վճռաբեկ դատարանի վարչական պալատ/վարչական դատարան	1

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատ	1
Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության դատարան	1
Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան	1
Սնանկության դատարան	1
Հակակոռուպցիոն դատարան	1
Վերաքննիչ քրեական դատարան	1

Դիտարկման ենթարկված վարույթներում ներգրավված 15 դատավորներից միայն մեկն է ունեցել կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի ժամանակ հանված կամ մարված չեղած կարգապահական տույժ: Միաժամանակ, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ 12 որոշումներից 4-ում դատավորի՝ կարգապահական տույժ ունենալու կամ չունենալու մասին տեղեկությունը բացակայել է:

1.1. Կարգապահական վարույթ հարուցող մարմիններ

Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեն Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, Արդարադատության նախարարը (Լիազոր մարմին) և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Դիտարկված 12 վարույթներից գերակշիռ մասը, այն է՝ 9-ը, հարուցվել է Արդարադատության նախարարի կողմից, 3-ը՝ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից: Քննարկվող ժամանակահատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից կարգապահական վարույթ չի հարուցվել:

Գծապատկեր 2. Կարգապահական վարույթ հարուցած մարմինները՝ ըստ վարույթների քանակի



Հատկանշական է, որ նախորդող տարիներին հարուցված վարույթների վիճակագրությունը վեր է հանել համանման պատկեր: Ինչպես 2023 թվականի առաջին կիսամյակում[1], այնպես էլ 2022 թվականին[2] քննված կարգապահական վարույթների մեծամասնությունը հարուցվել է ՀՀ Արդարադատության նախարարի կողմից:

Արդարադատության նախարարի՝ որպես գործադիր իշխանության մարմնի կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասությունը դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթներին առնչվող առավել կարևոր հարցերից մեկն է: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի (ԳՐԵԿՈ) 2021 թվականի Հայաստանի վերաբերյալ զեկույցի մեջ անդրադարձ է կատարվել նաև այս հարցին՝ նախարարին տրված

[1] 2023թ. ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը քննել է 18 վարույթ, որոնցից 15-ը հարուցված է եղել Արդարադատության նախարարի կողմից (մեկ վարույթը վերաբերել է 4 դատավորների) և 3 վարույթները հարուցված են եղել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից: Զեկույցն ամբողջությամբ հասանելի է՝ Դատավորների կարգապահական պատասխանատվության հիմնահարցերը. 2023թ. հունվար-հունիս ամիսներին քննված վարույթների ուսումնասիրություն, https://prwb.am/2024/03/13/datavornerin-kargapahakan-patasxanatvuthyan-entharkelu-himnaharcereh-2023th%e2%80%a4-hunvar-hunis-amisnerin-khnnvatc-varuythneri-usumnasiruthyun/

[2] 2022թ.ընթացքում Բարձրագույն դատական խորհուրդը քննել է 24 կարգապահական վարույթ՝ 23 դատավորների նկատմամբ և 1-ը՝ Խորհրդի անդամի նկատմամբ: Կարգապահական վարույթներից մեծամասնությունը՝ 18 վարույթը, հարուցված են եղել Արդարադատության նախարարի կողմից, 4-ը՝ Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից և 1-ը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից: Խորհրդի անդամի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվել էր Խորհրդի հանձնախմբի կողմից: Զեկույցն ամբողջությամբ հասանելի է՝ Դատավորների կարգապահական պատասխանատվության պրակտիկան. 2022թ. կայացած վարույթներ, https://prwb.am/2023/07/27/zekuyc%e2%80%a4-datavorneri-kargapahakan-patasxanatvuthyan-praktikan%e2%80%a4-2022th%e2%80%a4-in-kayacatc-varuythner/

նման իրավասությունը խնդրահարույց դիտարկելով[3]: Խոսելով դատական իշխանության մասին՝ ԳՐԵԿՈ-ն նշել է. *«Ինչ վերաբերում է դատական համակարգին, ապա Արդարադատության նախարարի դերը դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներում չի դադարեցվել, և ներկայիս իրավիճակը անհամատեղելի է դատական համակարգի անկախության հետ»*[4]:

Հարցին, սակայն, անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը: Խոսելով Արդարադատության նախարարի կողմից դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորության մասին՝ Վենետիկի հանձնաժողովը գտել է, որ «*նախարարին տրված նման լիազորությունը վիճելի չէ, քանի որ վերջինս դերակատարում չունի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերջնական որոշման կայացման հարցում: Արդարադատության նախարարության նման լիազորությունը հնարավոր կլինի վերացնել այն դեպքում, երբ Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովը լիարժեք աշխատում է»*[5]:

Արդարադատության նախարարին նման իրավասություն տալը պայմանավորված է եղել նաև վարույթ հարուցելու մյուս մարմինների գործունեության արդյունավետության և անկախության ապահովման խնդրով: Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմի մեծամասնությունը հանդիսանում են դատավորներ: Մասնավորապես, հանձնաժողովը բաղկացած է 6 դատավոր և 2 ոչ դատավոր անդամներից: Դատավորների նման մեծամասնության պայմաններում առկա է մտավախություն, որ Հանձնաժողովը կարող է դատավորների շահերի սպասարկում ապահովել և, ըստ այդմ, արդյունավետորեն չիրականացնել իրեն տրված իրավասությունը: Հետևաբար, Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի գործունեությունը դեռևս չի բավարարում արդյունավետության այն պահանջներին, որոնք բխում են վերջինիս նպատակներից:

Միևնույն ժամանակ, սակայն, արդեն տևական ժամանակ Արդարադատության նախարարի կողմից հարուցվում են բազմաթիվ վարույթներ, որոնց առնչությամբ նույնպես առկա են մտահոգություններ, օրինակ, թե ինչպես է կատարվում հարուցվող վարույթների

---

[3] Council of Europe, GRECO Group of States against Corruption, Fourth Evaluation Round report on Armenia, 2021, https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

[4] Group of States against Corruption, Fourth evaluation round, Corruption prevention in respect of members of parliament, judges and prosecutors, Interim compliance report Armenia, 2021, https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680a3fcad

[5] European Commission for Democracy Through Law (Venice Commission) Armenia Draft Joint Opinion of The Venice Commission and The Directorate of Human Rights (Dhr) Of The Directorate General Of Human Rights And Rule Of Law (Dgi) of The Council Of Europe On The Amendments to The Judicial Code And Some Other Laws, 2019 https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL(2019)030-e

ընտրությունը և ինչ նպատակ են հետապնդվում կոնկրետ դատավորների դեմ կարգապահական վարույթ հարուցելով: Հարկ է նշել նաև, որ դեռևս 2021 թվականին Արդարադատության նախարարի կողմից հայտարարվեց, որ դատական համակարգը մաքրելու, զտելու միակ գործող իրական մեխանիզմը կարգապահական պատասխանատվության գործիքակազմն է[6]: Հաջորդ տարիներին դատավորների նկատմամբ Արդարադատության նախարարության կողմից հարուցված կարգապահական պատասխանատվության վարույթների թիվը էականորեն աճեց, ինչը լրջագույն կասկածներ է հարուցում այս գործիքակազմի անաչառ և օբյեկտիվ կիրառման վերաբերյալ:

Խոսելով էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի մասին, պետք է նշել, որ թեև ՀՀ Դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությամբ նախատեսված է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ոչ դատավոր անդամների թվի ավելացում, և դրա հիման վրա մշակվել էր օրենսդրական փոփոխության հայեցակարգ, այնուհանդերձ, օրենսդրական փոփոխություններ դեռևս չեն կատարվել, և Հանձնաժողովի կազմը վերանայված չէ, ինչը թույլ կտար ապահովել դատավոր և ոչ դատավոր անդամների բալանսավորված մասնակցություն որոշումների կայացմանը:

1.2. Վարույթ հարուցելու առիթները

Կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1. անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը,
2. կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները,
3. վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը,
4. վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը,

[6] Կարեն Անդրեասյան. «Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթներն օրինական են, արդար և ճիշտ է, և նույնիսկ՝ քիչ» https://www.aravot.am/2021/08/12/1209697/

5. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից դատական օրենսգրքի 73.1-ին հոդվածով սահմանված բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքով բացասական եզրակացության տրամադրումը:[7]

Մշտադիտարկման ենթարկված վարույթները հարուցվել են հետևյալ առիթների հիման վրա. 4 վարույթ հարուցվել է ֆիզիկական անձի կողմից ներկայացված հաղորդման հիման վրա, ընդ որում՝ երկուսը փաստաբանների կողմից, 2 վարույթ հարուցվել է իրավաբանական անձի հաղորդման հիման վրա, 4 վարույթ հարուցվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդման հիման վրա, 1 վարույթ՝ զանգվածային լրատվական միջոցների հրապարակումների հիման վրա, ևս 1 վարույթ հարուցվել էր վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների խախտումը արձանագրող ՄԻԵԴ կայացրած դատական ակտի հիման վրա:

Աղյուսակ 3. ԲԴԽ կողմից քննված կարգապահական վարույթների հարուցման առիթները.

Վարույթների առիթը	Վարույթների քանակը
Անձի դիմումի հիման վրա (ֆիզիկական և իրավաբանական)	6
Պետական և տեղական ինքնակառավարման մարմնի, պաշտոնատար անձի դիմումի հիման վրա	4
Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերման հիման վրա	1
Զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա	1

[7] Դատական օրենսգիրք, հոդված 146-րդ:

1.3. Վարույթ հարուցելու հիմքերը

Դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթների հիմքում մեծամասամբ եղել են դատավարական իրավունքի նորմի խախտումներ, մի շարք դեպքերում նաև այն ներառել է վարքագծի կանոնի խախտումներ։

Այսպես, հարուցված 12 կարգապահական վարույթները վերաբերել են հետևյալ խախտումներին;

- 2 վարույթով դատավարական իրավունքի նորմի խախտում,
- 6 վարույթով դատավարական իրավունքի խախտում, որը ներառել է նաև վարքագծի կանոնի խախտում,
- 3-ով՝ վարքագծի կանոնի խախտում,
- 1-ով նյութական իրավունքի նորմի, դատավարական իրավունքի նորմի խախտումներ, ինչպես նաև վարքագծի կանոնի խախտում։

Գծապատկեր 4. Կարգապահական վարույթների հարուցման հիմքերը.

1.4. Միջնորդությամբ բարձրացված ենթադրյալ խախտման հակիրճ նկարագրությունը

Վարույթ հարուցող մարմնի կողմից կարգապահական վարույթի միջնորդությունների հիմքում դրվել են տարբեր խախտումներ, որոնք հանգում են հետևյալին.

Արդարադատության նախարարի կողմից հարուցված վարույթներ.

1. Արդարադատության նախարարի կողմից ներկայացված միջնորդություններից մեկի հիմքում եղել է ՔԿԱԳ գործակալության պետի զեկուցագիրը, ըստ որի՝ Դատարանը վճռով հաստատել է դիմողների կողմից երեխայի որդեգրման փաստը, սակայն նրանք հաշվառված չեն եղել որպես որդեգրել ցանկացող անձինք, ուստի չեն ունեցել այդ իրավունքը։ Բացի այդ, երեխան չի եղել որդեգրման ենթակա երեխաների ցուցակում։ Դատարանը, անտեսելով վերոգրյալը, հաստատել է որդեգրման փաստը։ Վարույթ հարուցող մարմինը ներկայացրել է նաև, որ վճռի պատճառաբանական մասի և Դատավորի դիրքորոշման միջև առկա է անհամապատասխանություն, այն առումով, որ բացատրությամբ ներկայացված պատճառաբանությունները որևէ կերպ արտահայտված չեն վճռում, ընդհակառակը՝ վճռի կայացման հիմքում բացառապես և ուղղակիորեն դրվել է երեխայի կենսաբանական ծնողների նոտարական կարգով տրված համաձայնությունը՝ դիմողների կողմից երեխայի որդեգրման վերաբերյալ։ Ըստ վարույթ հարուցող մարմնի, Դատարանը չի պահպանել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված կանոնները, քանի որ նորմում նշված անձինք չեն ստացել նախազգուշացում որդեգրման վերաբերյալ տեղեկությունները չհրապարակելու պատասխանատվության մասին։ Դատավորը հրապարակել է վճիռը դատական տեղեկատվական համակարգ կայքում (www.datalex.am), ինչի արդյունքում դրա ամբողջական տեքստը հասանելի է դարձել անորոշ թվով անձանց[8]։

2. Մեկ այլ վարույթի առիթ հանդիսացել է ֆիզիկական անձի դիմումը, համաձայն որի՝ դատավորը, նույն անձի վերաբերյալ (հորեղբոր որդու) գործ քննելով, մեկ քաղաքացիական գործի շրջանակներում գործը քննել և գործի քննության սկզբում ինքնաբացարկ է հայտնել՝ հաշվի առնելով, որ հանդիսանում է իր մոտ ազգականը, իսկ մեկ այլ քաղաքացիական գործի շրջանակներում ինքնաբացարկ չի հայտնել, կողմերին այդ ինքնաբացարկի հիմքերի մասին չի բացահայտել, գործի քննությունը շարունակել է և կայացրել է դատական ակտ, չնայած որ կողմը եղել է նույն անձը։[9]

3. Գլխավոր դատախազության հաղորդման հիման վրա հարուցված վարույթի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ դատավորը կայացված որոշմամբ ենթադրաբար չի

[8] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-74-Ո-Կ-18 որոշում։
[9] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշում։

հիմնավորել իր կողմից Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումից շեղվելը, մինչդատական վարույթն ավարտված լինելու պայմաններում բեկանել է առաջին ատյանի դատարանի կայացրած ակտը՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը փոխելով տնային կալանքով[10]:

4. Վարույթներից մեկի հարուցման հիմքում դրվել է ՄԻԵԴ որոշմամբ արձանագրված խախտման հանգամանքը: Արդարադատության նախարարը բարձրացրել է այն հանգամանքը, որ դիմումատու ընկերությունը դիմելով Վարչական դատարան՝ նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վարույթի շրջանակներում վիճարկման առարկա է դարձրել Նախագահի հրամանագրերի համապատասխան դրույթները՝ բարձրացնելով դրանք՝ իրենցից ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին (բացառությամբ Սահմանադրության) անհամապատասխանության հարց, որը Վարչական դատարանի կողմից վարույթ չի ընդունվել, ապա նույն դատարան ներկայացված բողոքը նույնաբովանդակ հիմնավորմամբ մերժվել է՝ հիմքում դրվելով այն մոտեցումը, որ հայցադիմումով, ըստ էության, վիճարկվում է Նախագահի հրամանագրի որոշ դրույթների հենց սահմանադրականության հարց այն դեպքում, երբ Դիմումատու ընկերությունը ներկայացված հայցադիմումում հստակ նշել է այն օրենքների շրջանակը, որոնց, իր համոզմամբ, հակասում են Նախագահի հրամանագրերը՝ ներկայացրած լինելով հիմնավորումներ և դրանց վերաբերյալ վերլուծություններ: Սահմանադրական դատարանը մերժել է Դիմումատու ընկերության դիմումը՝ պատճառաբանելով, որ անձինք առանձին դիմումներ կարող են ներկայացնել Սահմանադրական դատարան միայն, եթե վիճարկում են օրենքի դրույթի սահմանադրականությունը՝ եզրահանգելով, որ Դիմումատու ընկերությունն իրավունք չուներ վիճարկելու նախագահի հրամանագրի սահմանադրականությունը: Սույն հարցի վերաբերյալ առկա է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռ, որով, ի թիվս այլնի, արձանագրվել է, որ արտակարգ դրություն հայտարարելու վերաբերյալ Նախագահի հրամանագրի դեմ ներկայացված՝ Դիմումատու ընկերության հայցադիմումի քննությունը Վարչական դատարանի կողմից ներկայացված հիմքով մերժվելու արդյունքում խախտվել է Դիմումատու ընկերության դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը, և տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում[11]:

5. Արդարադատության նախարարի կողմից հարուցված մեկ այլ վարույթի հարուցման առիթ հանդիսացել է մի խումբ փաստաբանների դիմումը: Ըստ հարուցված վարույթի՝ դատավորը մի շարք գործերով ենթադրաբար թույլ է տվել դատավարական ժամկետի խախտումներ, մասնավորապես մեկ գործով որոշումը հրապարակել և

[10] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-99-Ո-Կ-22 որոշում:
[11] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-4-Ո-Կ-2 որոշում:

կողմերին է տրամադրել 1 տարի 9 ամիս անց, երկու գործով 1 տարի 4 ամիս անց, այլ խումբ գործերով դատական ակտերը գործին մասնակցող անձանց տրամադրել է նշանակված ժամկետից համապատասխանաբար ավելի քան 1 տարի 2 ամիս և ավելի քան 1 տարի 4 ամիս անց: Ավելին, 54 քաղաքացիական գործով կատարողական թերթերը Դատարանի կողմից տրամադրվել են կատարողական թերթ տալու համար օրենքով սահմանված վերջնաժամկետից 10 օրից մինչև 6 ամիս անց:[12]

6. Ֆիզիկական անձի դիմումի հիման վրա հարուցված հաջորդ վարույթով կրկին բարձրացվել է դատավարական ժամկետների խախտման խնդիր: Ըստ վարույթ հարուցող մարմնի՝ Դատարանը եզրափակիչ դատական ակտը հրապարակել է ոչ թե գործի քննության ավարտից հետո 15 օրվա ընթացքում՝ այլ ավելի քան 1 տարի 11 ամիս անց, ինչպես նաև եզրափակիչ դատական ակտը դատավարության կողմերին տրամադրվել է ոչ թե դրա կայացման օրը կամ առնվազն դրան հաջորդ օրը, այլ հրապարակման նշանակման օրվանից ավելի քան 1 տարի 11 ամիս անց:[13]

7. Դատավարական ժամկետներին վերաբերող հաջորդ վարույթի առիթ հանդիսացել է հասարակական կազմակերպության դիմումը: Ըստ հարուցված վարույթի՝ դատավորը առանձին խումբ քաղաքացիական գործերով այդ ժամկետը եղել է 1 տարի 1 ամսից մինչև 3 տարի 5 ամիս, մի խումբ գործերով կայացված դատական ակտերը հրապարակել է հրապարակման ժամկետից 11 ամսից մինչև 1 տարի 11 ամիս անց, նմանապես առանձին խումբ գործերով վճիռները դատական տեղեկատվական համակարգում հրապարակել է հրապարակման նշանակված ժամկետից ավելի քան 2 տարուց մինչև 2 տարի 11 ամիս անց և նշված դատական ակտերը գործին մասնակցող անձանց տրամադրվել են հրապարակման նշանակված ժամկետից ավելի քան 2 ամսից մինչև 2 տարի 10 ամիս անց:[14]

8. Վարույթներից մյուսով առիթ հանդիսացել է «Iravaban.net» լրատվական կայքում հրապարակված տեսանյութը «Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի և այլ գործերի տապալման մեղավորները. բացահայտումներ դատական իշխանությունից» վերնագրով հրապարակումը: Տեսանյութում առկա է նշում, որ այն պատրաստվել է Դատական դեպարտամենտի կողմից: Համաձայն վարույթ հարուցող մարմնի՝ Դատարանը քննել է պաշտոնատար անձի կողմից կաշառք ստանալու հանցագործությունների կատարման (դրան օժանդակելու) մեջ մեղադրվող երկու անձանց վերաբերյալ գործը, մեկ այլ՝ սահմանադրական կարգը տապալելու հանցագործության կատարման մեջ մեղադրանքի հետ համատեղ, ընդ որում՝ Սահմանադրական կարգը տապալելու հանցագործության կատարման մեջ, բացի նշված երկու մեղադրյալներից, մեղադրվել են ևս երկու այլ

[12] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-88-Ո-Կ-20 որոշում:
[13] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-51-Ո-Կ-5 որոշում:
[14] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշում:

անձինք։ Հատկանշական է, որ այս երկու ենթադրյալ հանցագործությունների կատարման փաստական հանգամանքները, իրավական հիմքերը, հիմնավորումներն ակնհայտորեն որևէ առնչություն չեն ունեցել գործով քննվող մյուս մեղադրանքների հետ։ Արդարադատության նախարարը ուշադրություն է հրավիրել դատավորի կողմից կատարված մի շարք գործողությունների վրա, որոնք իրենց համադրության մեջ հանգեցրել են գործի ողջամիտ ժամկետում քննության խախտմանը։[15]

9. Քրեակատարողական ծառայության պետի դիմումի հիման վրա հարուցված վարույթի համաձայն՝ գործով դատավորը «Կարճաժամկետ մեկնման թույլտվություն ստանալու միջնորդությունը քննության առնելու մասին» որոշմամբ բավարարել է կալանավորված անձի միջնորդությունը՝ քրեակատարողական հիմնարկից կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ։ Որոշմամբ Դատարանը, անդրադառնալով մեկնման ժամանակի, տևողության և վայրի, ինչպես նաև մեկնումը քրեակատարողական հիմնարկի վարչակազմի ներկայացուցչի ուղեկցությամբ իրականացվելու անհրաժեշտության հետ կապված հարցերին, միաժամանակ լուծել է վերադարձի համար անհրաժեշտ ժամանակի, ինչպես նաև մեկնման եղանակի հետ կապված այնպիսի հարցեր, որոնք, համաձայն «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» N 543-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 195-րդ կետի, «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի 17-րդ հոդվածի 10-րդ պարբերության կարգավորումների՝ չէին կարող տեղ գտնել կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի որոշման մեջ։[16] Վարույթ հարուցող մարմինը ըստ այդմ եզրահանգել , որ դատավորը դուրս է եկել իր իրավասությունների շրջանակից։

Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից հարուցված վարույթներ.

10. Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից հարուցված վարույթներից մեկի առիթ հանդիսացել է փաստաբանի դիմումը այն մասին, որ քրեական գործով դատավորը թույլ է տվել գործը ողջամիտ ժամկետում քննելու և լուծելու պահանջի խախտում, ինչն էլ իր հերթին հանգեցրել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելուն, որի արդյունքում ամբաստանյալի

[15] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-54-Ո-Կ-6 որոշում։
[16] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-70-Ո-Կ-9 որոշում։

նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել և քրեական գործի վարույթը կարճվել է:[17]

11. Իրավաբանական անձի դիմումի հիման վրա հարուցված վարույթով, ըստ հարուցող մարմնի դիրքորոշման, հայցադիմումը ներկայացնելու օրվա դրությամբ գործող «Սնանկության մասին» օրենքի 36-րդ հոդվածի հիման վրա դատավորը մերժել է հայցը վարույթ ընդունել, քանի որ քաղաքացիական գործը ենթակա չէ քաղաքացիական դատավարության կարգով քննության: Չնայած Վերաքննիչ դատարանի որոշումը վերացնելու հանգամանքին, հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո կրկին կարճել է միևնույն քաղաքացիական գործը քաղաքացիական դատավարության կարգով քննության ենթակա չլինելու հիմքով: Վերաքննիչ դատարանը հաստատել է, որ նախկինում նույն հիմնավորմամբ արդեն մերժվել էր հայցի ընդունումը և որոշման մեջ առկա չէ որևէ հիմնավորում կամ ծանրակշիռ փաստարկ՝ վերադաս դատական ատյանի կողմից կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատական ակտում արտահայտած իրավական դիրքորոշումներից շեղվելու մասին:[18]

12. Էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կողմից հարուցված հաջորդ վարույթի առիթ հանդիսացել է ՀՀ Արդարադատության ակադեմիայի ռեկտորի կողմից ստացված գրությունը: Ըստ հարուցված վարույթի տվյալների՝ Դատավորը իր կամարտահայտությամբ ընտրել է ընդհանուր և հարակից մասնագիտական դասընթացների վերապատրաստման հեռավար ուսուցման ձևով անցկացվող «Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և ուղղությունները» հեռաուսուցման դասընթացը, որի հեռավար ուսուցման ձևով վերապատրաստման ժամանակացույցը սահմանվել է 2023 թվականի սեպտեմբեր-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում: Սակայն անցկացված «Քաղաքացիական դատավարության արդի հիմնախնդիրները և ուղղությունները» հեռաուսուցման դասընթացին հիմնականում մասնակցություն չի ունեցել, ինքնաստուգիչ հարցերի պատասխաններն ուղարկել է միայն մեկ շաբաթվա կտրվածքով, իսկ մնացած 9 շաբաթներինը չի ուղարկել:[19] Հանձնաժողովն ընդգծել, որ թույլ տրված խախտումն իր բնույթով այնպիսին է, որ հեղինակազրկում է դատական իշխանությունը և չի կարող ունենալ նվազ կարևոր նշանակություն առնվազն այն հիմնավորմամբ, որ պարտադիր վերապատրաստվելու պարտականությունն ունի իրավաչափ նպատակներ, այդ թվում՝ հետապնդում է առնվազն Դատավորի՝ մասնագիտական պատրաստվածության բավարար մակարդակն ապահովելու նպատակ, և եթե Դատավորը չի վերապատրաստվում, ապա չի բացառվում, որ այդ հանգամանքը կարող է ազդել իր մասնագիտական պատրաստվածության

[17] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-23-Ո-Կ-3 որոշում:
[18] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-88-Ո-Կ-19 որոշում:
[19] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-7 որոշում:

մակարդակի վրա՝ ունենալով իր բացասական ազդեցությունը նաև արդարադատության որակի վրա:

1.5. Կարգապահական ենթադրյալ խախտման մեղքի ձևը՝ ըստ վարույթ հարուցող մարմնի

Անդրադառնալով վարույթը հարուցած մարմնի կողմից վկայակոչված մեղքի ձևին՝ վարույթներից 11-ով վարույթ հարուցող մարմինը կարգապահական խախտումը որակել է կոպիտ անփութությամբ կատարված և միայն 1 դեպքով՝ դիտավորությամբ կատարված[20]: Ընդ որում, ուսումնասիրված 12 վարույթներից 9-ի պարագայում արարքը կոպիտ անփութությամբ կատարված որակվել է ինչպես վարույթ հարուցող մարմնի, այնպես էլ հետագայում Խորհրդի կողմից:

Վարույթներից մեկով դատավորի կողմից թույլ տրված արարքը Խորհրդի կողմից հետագայում գնահատվել է որպես նվազ կարևորության արարք և մեղքի ձևին առանձին անդրադարձ չի կատարվել[21]: Մեկ այլ վարույթով կոպիտ անփութությամբ կատարված արարքի համար դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը Խորհրդի կողմից մերժվել է մեղքի բացակայության որակմամբ[22]:

Վարույթը հարուցող մարմնի կողմից անփութության որակումը կատարվել է Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի, Օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, 147-րդ հոդվածի 5-ին մասի, 148-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա:

1.6. Կարգապահական վարույթ հարուցելու ժամկետները և վարույթի տևողությունը, դատավորի բացատրությունը

Համաձայն Դատական օրենսգրքի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով վարույթը կարող է հարուցվել՝

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտման հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում: Սույն կետով նախատեսված հիմքով կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, եթե եզրափակիչ դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո անցել է ութ տարի.

---

[20] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-88-Ո-Կ-19 որոշում:
[21] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-7 որոշում:
[22] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-51-Ո-Կ-5 որոշում:

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց մեկ տարի հետո, բացառությամբ սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտումների.

3) դատավորի կողմից սույն օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնները դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ խախտելու հիմքով՝ խախտումը վարույթ հարուցող մարմնի կողմից հայտնաբերվելուց հետո՝ մեկ տարվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան խախտումը կատարելուց երեք տարի հետո:[23]

Կազմակերպության կողմից ուսումնասիրված բոլոր կարգապահական վարույթներով Դատական օրենսգրքով սահմանված վարույթ հարուցելու ժամկետները պահպանվել են:

Սրան առնչվող միակ խնդիրը, որը բարձրացվել է դատավորների կողմից, վերաբերում է ՄԻԵԴ որոշմամբ արձանագրված խախտման հիմքով հարուցված վարույթին, որի առնչությամբ բարձրացվել է ժամկետի և օրենքի հետադարձության կիրառման խնդիր: Այս հարցի առնչությամբ Խորհուրդը հղում է կատարել նախկինում արդեն իսկ իր կողմից ձևավորած մոտեցմանն ու արտահայտված դիրքորոշմանը[24]: Համաձայն որի, նման վարույթները ընդունելի են, եթե դա ակնհայտորեն պայմանավորված է դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով:

Համաձայն Դատական օրենսգրքի՝ հարուցված կարգապահական վարույթի տևողությունը մինչև կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելը չի կարող երկու ամսից ավելի լինել:[25] Կազմակերպության կողմից վերլուծվել է հարուցման և մինչև միջնորդությամբ Խորհրդին դիմելու ամսաթվերը՝ ըստ աշխատանքային օրերի: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տվել, որ ուսումնասիրված 12 վարույթներով պահպանվել է նաև օրենսգրքով սահմանված երկամսյա ժամկետը:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության դեպքում վարույթ հարուցող մարմինը որոշում է կայացնում դատավորին

[23] Դատական օրենսգիրք, հոդված 144:
[24] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ- 57-Ո-Կ-17 և ԲԴԽ-105-Ո-Կ-26 որոշումներ:
[25] ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 147:

կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելու համար Բարձրագույն դատական խորհուրդ միջնորդություն ներկայացնելու մասին:[26]

Կարգապահական վարույթ հարուցելու փուլը հրապարակային չէ և վարույթ հարուցող մարմնի որոշումները հրապարակային չեն: Այնուամենայնիվ, նիստերի ընթացքում մշտադիտարկում իրականացնելով և ուսումնասիրելով Խորհրդի վերջնական որոշումները, հնարավոր է դարձել վեր հանել այդ փուլում դատավորների ընթացակարգային իրավունքների ապահովման վերաբերյալ ընդհանուր պատկերը:

Ուսումնասիրված 12 վարույթներից 11-ի պարագայում դատավորները վարույթի քննության փուլում վարույթ հարուցող մարմնին ներկայացրել են բացատրություն:

2. ՎԱՐՈՒՅԹԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ

Ուսումնասիրված բոլոր գործերով նիստերին մասնակցել են վարույթ հարուցող մարմնի ներկայացուցիչները, որոշ վարույթներով նաև մեկից ավելի ներկայացուցիչներ:

Ուսումնասիրված 12 վարույթներից 10-ով դատավորները հանդես են եկել անձամբ, 1 վարույթով դատավորը ներկայացել է փաստաբանի հետ: Մեկ վարույթով, որտեղ ներգրավված են եղել 4 դատավորներ՝ միջնորդել են նիստն անցկացնել իրենց բացակայությամբ, չեն եղել նաև ներկայացուցիչներ:

Գրեթե բոլոր վարույթներով դատավորները հարցեր են հնչեցրել վարույթը հարուցող մարմնին, որոշ վարույթներով՝ նաև ներկայացրել միջնորդություններ:

Կարգապահական 12 վարույթներից 11-ով դատավորները վիճարկել են միջնորդությամբ իրենց վերագրվող խախտումները: Մեկ վարույթով դատավորը վկայակոչելով գործի հանգամանքները՝ խնդրել է դատավարական նորմի խախտումները համարել նվազ կարևորության: Դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցված գործերով, ի թիվս այլնի, դատավորները բացատրությամբ բարձրացրել են գերծանրաբեռնվածության հարցը, ինչը ազդել է օրենքով սահմանված ժամկետներում գործը քննելու և ավարտելու վրա: Վարույթներից միայն մեկով դատավորը չի ներկայացրել պատասխան: Նշված վարույթով դատավորը հնարավորություն է ունեցել հարցեր ուղղել վարույթ հարուցող մարմնին, սակայն նշանակված հաջորդ դատական նիստի մեկնարկին դատավորը չի ներկայացել նիստին, որի պատճառով վարույթը հայտարարվել է ավարտված, և ըստ էության դատավորը չի կարողացել հայտնել կարգապահական վարույթի վերաբերյալ իր դիրքորոշումը, որից հետո միջնորդել է վերսկսել վարույթը: Այս միջնորդությունը, սակայն, մերժվել է Խորհրդի կողմից[27]:

---

[26] Դատական օրենսգիրք, հոդված 148:

[27] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ- 54-Ո-Կ-6 որոշում:

Դատավարական ժամկետների ենթադրյալ խախտման վերաբերյալ հարուցված վարույթներից մեկով դատավորը ներկայացրած գրավոր բացատրությամբ հայտնել է, որ բացակայում է կարգապահական վարույթ հարուցելու առիթը, և միջնորդել հարուցված վարույթը կարճել: Դատավորը, մասնավորապես, բարձրացրել է վարույթ հարուցելու շահագրգռվածության հարցը՝ նշելով, որ յուրաքանչյուր հաղորդման դեպքով պետք է պարզվի՝ արդյո՞ք հաղորդում ներկայացնողը հանդիսանում է շահագրգիռ անձ, քանի որ միայն իրավական շահագրգռվածության առկայության պարագայում անձը կարող է ակնկալել ենթադրյալ խախտված իրավունքների պաշտպանություն: Դատավորը նշել է նաև, որ 24.11.2022թ. և 27.02.2023թ. որոշումներով իրեն կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությունները բավարարվել են և հայտարարվել է նկատողություն: Նշված որոշումների հիմքում, ըստ էության, դրվել է գրեթե նույն ժամանակահատվածից սկսած այլ քաղաքացիական գործերով թույլ տրված նմանատիպ դատավարական իրավունքի նորմի և դատավորի վարքագծի կանոնի խախտումներ: Ըստ դատավորի՝ սույն և նշված կարգապահական վարույթների ուսումնասիրությունից հետևում է, որ բոլոր դեպքերում էլ վերագրված կարգապահական ենթադրյալ խախտման հիմքերն ըստ էության նույն են և տարբեր տևողություններով ըստ էության վերաբերում են նույն ժամանակահատվածին[28]:

Խորհուրդը վերջնական որոշմամբ անդրադարձել է նաև դատավորի կողմից բարձրացված վերոնշյալ հարցին, շեշտելով, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հաղորդում ի թիվս պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի կարող է ներկայացնել ցանկացած անձ: Այսպիսով, հաղորդման ներկայացման համար օրենսդիրը չի սահմանել իրավական շահագրգռվածություն ունեցող սուբյեկտների շրջանակ: Այսինքն, Օրենսգրքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հաղորդումը, ինչպես նաև նույն հոդվածի 1-ին մասի 2-4-րդ կետերով նախատեսված կարգապահական վարույթ հարուցելու մյուս առիթներն ազդակ են վարույթ հարուցող մարմնի համար իր իսկ կողմից կատարված ուսումնասիրություններ կատարելու, ըստ այդմ՝ արդյունքում կարգապահական վարույթ հարուցելու կամ չհարուցելու համար: Միաժամանակ, օրենսդրորեն նախատեսված չէ, որ հաղորդում ներկայացնող անձի շահագրգիռ անձ չհանդիսանալը կարող է կարգապահական վարույթ չհարուցելու կամ հարուցված կարգապահական վարույթը կարճելու հիմք լինել:

Մեկ այլ վարույթով դատավորը ներկայացրած բացատրությամբ Խորհրդի ուշադրությունն է հրավիրել օբյեկտիվ հանգամանքների, որոնցով պայմանավորված է եղել

[28] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշում:

դատավարական ժամկետների խախտումները։ Մասնավորապես, դատավորը նշել է, որ վարույթով քննարկվող ժամանակահատվածում կոտրել է ոտքը և գտնվել անաշխատունակության մեջ, նույն ժամանակահատվածում երեք անգամ ենթարկվել է վիրահատության, ավելին, այդ ընթացքում իր կյանքում տեղի են ունեցել անդառնալի կորուստներ[29]։

ՄԻԵԴ որոշմամբ արձանագրված խախտման հիմքով հարուցված վարույթի շրջանակներում դատավորները ներկայացված բացատրությամբ գտել են, որ թեև ձևական առումով առկա է կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հատկանիշներ, սակայն նկատի ունենալով, որ արարքը չի դրսևորվել դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, պետք է եզրահանգել, որ բովանդակային առումով բացակայում է սուբյեկտիվ կողմը։ Դատավորներ Ռ.Հ.-ն, Հ. Բ.-ն և Ա. Ղ.-ն նշել են նաև, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձության ուժի մերժման սկզբունքի հիմքով՝ "Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում 02.05.2020թ-ից ուժի մեջ մտած թիվ ՀՕ-197 օրենքով լրացված կարգավորումներով իրենց նկատմամբ չէր կարող կարգապահական վարույթ հարուցվել, քանի որ այն իրենց իրավական վիճակը վատթարացնող իրավական նորմ է[30]։ Խորհուրդը, անդրադառնալով բարձրացված հարցին, հղում է կատարել նախկինում նմանատիպ միջնորդությունների առնչությամբ արդեն իսկ հայտնած դիրքորոշմանը և լրացուցիչ հիմնավորում չի տվել (03.07.2023թ թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-17, 26.12.2022թ թիվ ԲԴԽ-105-Ո-Կ-26)։ Սույն գործով վճռաբեկ դատարանի վարչական պալատի դատավոր Ք.Մ.-ը առանձին դիմում է ներկայացրել Խորհրդին, որով հայտնել է, որ պնդում է հարուցված վարույթի վերաբերյալ Արդարադատության նախարարին ներկայացված բացատրությունը։

2.1 Խորհրդին ներկայացված միջնորդությունները

Դատավորների կողմից Խորհրդին ներկայացված միջնորդություններով բարձրացվել են տարբեր հարցեր։

Վարույթներից մեկով Դատավորի կողմից Խորհրդին ուղղվել է գործի քննությունը վերսկսելու մասին միջնորդություն, ինչը Խորհրդի կողմից մերժվել է։ Խորհուրդը մերժումը հիմնավորել է նրանով, որ գործի վարույթի վերսկսման անհրաժեշտությունը գնահատելու հայեցողական լիազորությունը սույն վարույթում բացառապես պատկանում է Խորհրդին,

[29] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ- 51-Ո-Կ-5 որոշում։
[30] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-4-Ո-Կ-2 որոշում։

իսկ Խորհուրդը տվյալ պարագայում սույն գործի վարույթը վերսկսելը նպատակահարմար չի համարել՝ անկախ Դատավորի կողմից ներկայացված գործի վարույթը վերսկսելու մասին միջնորդության առկայության հանգամանքից: Խորհուրդը քննարկել է նաև միջնորդության հիմքում ընկած հանգամանքը, առ այն, որ «Դատավորի կողմից ներկայացված գործի վարույթը վերսկսելու մասին միջնորդության մեջ տեղ գտած՝ 10.07.2024 թվականի ժամը 10:00-ին նշանակված դատական նիստից 5 րոպե ուշանալու արդյունքում գործի քննությունն ավարտված համարելով՝ իր լսված լինելու իրավունքը խախտած լինելու մասին պնդմանը, Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ «լսված լինելու իրավունքը» բացարձակ իրավունք չէ, ավելին՝ այն ենթադրում է որոշակի գործողություններ կատարելու պարտականություն, ինչպիսիք են՝ նիստերին պատշաճ ժամանակին ներկայանալը, ներկայացուցիչ ուղարկելը, դիրքորոշման կամ պատասխանի ներկայացումը և այլն: Հարկ է ընդգծել նաև, որ Դատավորը հնարավորություն է ունեցել կարգապահական վարույթը նախաձեռնելու փուլից ներկայացնել դիրքորոշում կամ պատասխան, սակայն նա չի օգտվել այդ իրավունքից որևէ փուլում՝ չիրացնելով ՀՀ օրենսդրությամբ Դատավորին տարբեր փուլերում ընձեռնված՝ «լսված լինելու» հնարավորությունը […]»:

Խորհուրդը արձանագրել է նաև, որ *«[…]դատական նիստը սահմանված ժամին սկսելը միջազգայնորեն ամրագրված՝ արդար դատաքննության իրավունքի իրացման կարևորագույն պայմաններից մեկն է: Տվյալ դեպքում, Դատավորը, դատական նիստից առաջ և դրա ընթացքում որևէ ձևով Խորհրդին չի զգուշացրել իր բացակայության պատճառների և տևողության մասին, որի արդյունքում Խորհուրդը նիստը սկսելուց առաջ և նիստի ընթացքում տեղեկացված չի եղել Դատավորի հնարավոր ուշացման մասին և որևէ ողջամիտ ենթադրությամբ չէր կարող արձանագրել Դատավորի հնարավոր ուշացման փաստը, հատկապես, որ դատական քննության յուրաքանչյուր փուլում կողմի՝ նիստին չներկայանալը նրա երաշխավորված իրավունքներից է: Դատավորը կարգապահական վարույթի ընթացքը վերսկսելու մասին իր միջնորդության մեջ որևէ էական նշանակություն ունեցող հանգամանք կամ որևէ նոր փաստարկ կամ հիմնավորում չի ներառել, որը կարող էր հիմք հանդիսանալ Խորհրդի համար գործը վերսկսելու համար…»*: [31]

Նշվածը խնդրահարույց է այնքանով, որ փաստացի, դատավորը զրկվել է ընթացակարգային իրավունքներից և Խորհուրդը ցուցաբերել է ծայրահեղ խիստ մոտեցում:

Կարծում ենք, որ յուրաքանչյուր դեպքում լսված լինելու իրավունքը պետք է առանձնակի ուշադրության արժանանա, դատավորները պետք է լիարժեքորեն օգտվեն դատավարական իրավունքներից և երաշխիքներից, հատկապես, երբ նրանց մեղսագրվում

[31] Բարձրագույն դատական օրենսգիրք, ԲԴԽ-54-Ո-Կ-6 որոշում:

է կարգապահական խախտում, որը կարող է հանգեցնել այնպիսի տույժի, ինչպիսին է լիազորությունների դադարեցումը։

Վարույթներից մեկով դատավորը ինքնաբացարկ է հայտնել և՛ Խորհրդի նախագահին, և՛ Խորհրդի անդամներին՝ բացառությամբ Խորհրդի անդամներ Մերի Համբարձումյանի և Արմեն Դանիելյանի՝ պատճառաբանելով Խորհրդի անդամների կողմնակալ վերաբերմունքը Դատական դեպարտամենտի կողմից հրապարակված «Ռ. Քոչարյանի, Ս. Սարգսյանի և այլ գործերի տապալման մեղավորները. բացահայտումներ դատական իշխանությունից» ֆիլմում տրված գնահատականների առնչությամբ։ Ավելին, Խորհրդի նախագահ Կ. Անդրեասյանին ինքնաբացարկի միջնորդության հիմքում դրվել է նաև Հայաստանի հանրային հեռուստատեսության եթերում հարցազրույցը և դրա ընթացքում արված դատողությունները։ Այս միջնորդությունները մերժվել են Խորհրդի կողմից[32]։

Անհրաժեշտ է փաստել, որ երկու վարույթներով Խորհրդի անդամներն են ինքնաբացարկ հայտնել, որոնք բավարարվել են, որոնցից մեկով նաև Խորհրդի նախագահն է հայտնել ինքնաբացարկ[33]։ Խորհրդի անդամի ինքնաբացարկի պատճառը իր նկատմամբ կարգապահական վարույթի հարուցված լինելն էր, այսինքն Խորհրդի անդամը չէր կարող մասնակցել իր իսկ նկատմամբ հարուցված վարույթի քննությանը։ Նույն վարույթով Խորհրդի նախագահի ինքնաբացարկի հիմքը եղել է այն, որ նա ունի ընտանեկան/ընկերական հարաբերություններ կարգապահական պատասխանատվության ենթարկվող դատավորներից Ք. Մկոյանի հետ։

Վարույթից մեկով վարույթ հարուցող մարմնի կողմից ներկայացվել է միջնորդություն՝ նիստը դռնփակ անցկացնելու վերաբերյալ, որը վերաբերել է երեխայի որդեգրման հարցին։ Ներկայացված միջնորդությունը բավարարվել է Խորհրդի կողմից։ Մեկ այլ վարույթով դատավորը միջնորդել է նիստն անցկացնել դռնփակ, սակայն Խորհրդի կողմից այն մերժվել է[34]։

2.2 Վարույթի տևողությունը և նիստերի քանակը ԲԴԽ-ում

Ըստ Դատական օրենսգրքի կարգավորումների՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դատական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին միջնորդությունն

[32] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-54-Ռ-Կ-6 որոշում։
[33] Բարձրագույն դատական օրենսգիրք, ԲԴԽ-4-Ռ-Կ-2 որոշում։
[34] Նիստերի հրապարակայնությանն ու դռնփակ նիստին կանդրադառնանք ստորև։

ստանալու պահից եռամսյա ժամկետում[35]։ Ուսումնասիրված բոլոր գործերով վարույթի տևողությունը համապատասխանել է օրենքով սահմանված եռամսյա ժամկետում քննելու պահանջին։

Յուրաքանչյուր վարույթով Բարձրագույն դատական խորհրդում վարույթի տևողությունը և նիստերի քանակը եղել է տարբեր։ Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության վարույթների առավել կարճ տևողությունը եղել է 22 աշխատանքային օր[36], առավել երկարը՝ 50-ը[37]։

Ուսումնասիրված 12 վարույթներից 8-ով կայացված նիստերի քանակը եղել են 2-ը[38], 2 վարույթով 3-ը[39], 1 վարույթով 4-ը[40], 1-ով՝ 5-ը[41], որոնք ներառում են նաև Խորհրդի կողմից որոշման հրապարակման նիստերը։ Վարույթներից մեկով[42] նշանակված 1 նիստ չի կայացել՝ քվորում չլինելու պատճառով։

2.3 Վարույթի հրապարակայնությունը ԲԴԽ-ում

Կարգապահական 12 վարույթներից 11-ը անցկացվել են դռնբաց դատական նիստով։ Վարույթներից 1-ով նիստը անցկացվել է դռնփակ[43], որը վերաբերել է երեխայի որդեգրման վարույթի շրջանակներում դատավորի ենթադրյալ կարգապահական խախտման հարցի։

Մեկ վարույթով դատավորը միջնորդել է նիստն անցկացնել դռնփակ, միջնորդության հիմքում եղել է դատավորի ընտանիքում տեղի ունեցած կորուստը[44]։ Սակայն Խորհուրդը գործն ամբողջ ծավալով դռնփակ քննելու միջնորդությունը մերժել է՝ նշելով, որ անհրաժեշտության դեպքում նիստի որոշակի հատվածներ կարող են քննվել դռնփակ։[45] Չլինելով նման անհրաժեշտություն՝ նշված վարույթը ամբողջությամբ անցկացվել է դռնբաց։

Նշենք, որ դիտարկված 12 վարույթներից 8-ով բոլոր նիստերին ներկա են եղել զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ, 2 վարույթով զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ ներկա են գտնվել միայն կարգապահական

---

[35] ՀՀ դատական օրենսգիրք, հոդված 150։
[36] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշում։
[37] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-99-Ո-Կ-22 որոշում։
[38] Բարձրագույն դատական խորհուրդ ԲԴԽ-88-Ո-Կ-19 , ԲԴԽ-88-Ո-Կ-20, ԲԴԽ-2-Ո-Կ-1, ԲԴԽ-4-Ո-Կ-2, ԲԴԽ-23-Ո-Կ-3, ԲԴԽ-61-Ո-Կ-7, ԲԴԽ-61-Ո-Կ-8, ԲԴԽ-70-Ո-Կ-9 որոշումներով։
[39] Բարձրագույն դատական խորհուրդ ԲԴԽ-74-Ո-Կ-18 և ԲԴԽ-51-Ո-Կ-5 որոշումներ։
[40] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-99-Ո-Կ-22 որոշում։
[41] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-54-Ո-Կ-6 որոշում։
[42] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-51-Ո-Կ-5 որոշում։
[43] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-74-Ո-Կ-18 որոշում։
[44] Տե՛ս https://factor.am/752053.html
[45] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-23-Ո-Կ-3 որոշում։

պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Խորհրդի որոշումների հրապարակմանը:

Անդրադառնալով Խորհրդում տեղի ունեցած նիստերի հեռարձակման պրակտիկային՝ պետք է նկատել, որ 12 վարույթների շրջանակում Խորհրդի կողմից հեռարձակվել են միայն որոշումների եզրափակիչ մասերի հրապարակման նիստերը, իսկ բուն վարույթի քննությունը չի հեռարձակվել: Կազմակերպության կողմից նիստերի ամբողջական հեռարձակման դադարեցումը արդեն գնահատվել էր որպես հրապարակայնության հարցում հետընթաց[46]: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ 2024 թվականի սեպտեմբերի 9-ից սկսած՝ դատական նիստերի հեռարձակումը կրկին իրականացվում է ամբողջությամբ:

Այս համատեքստում անհասկանալի է Բարձրագույն դատական խորհրդի կողմից ընդունված մոտեցումը: Միասնական պրակտիկա ապահովելու և հրապարակայնության սկզբունքի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է, որ բոլոր վարույթների ընթացքը հեռարձակվի ամբողջությամբ:

3. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Դիտարկված 12 վարույթներից 9-ով Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացվել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, 3 գործով՝ պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժվել է: Նշենք նաև, որ կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներից մեկով կարգապահական պատասխանատվության են ենթարկվել 4 դատավորներ:

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներից 4 վարույթով հաստատվել է դատավորի կողմից թույլ տրված վարքագծի նորմի խախտում, 3 վարույթով դատավարական նորմի և վարքագծի կանոնի խախտում, 2 գործով՝ նյութական և դատավարական նորմի, ինչպես նաև վարքագծի կանոնի խախտում:

---

[46] ԻՊԱՍ, Դատավորների կարգապահական պատասխանատվության պրակտիկան, 2022թ. կայացած վարույթներ, հասանելի է՝ https://prwb.am/wp-content/uploads/2024/08/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-1.pdf

Գծապատկեր 5. ԲԴԽ կողմից քննված վարույթների արդյունքները.



3.1 Խորհրդի որոշման հիմնավորվածությունը

Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումներին առնչվող առավել կարևոր հարցերից մեկը դրանց հիմնավորվածությունն է: Որոշման հիմնավորվածությունը առաջին հերթին խոսում է ինչպես գործընթացի, այնպես էլ որոշման օրինականության մասին, ինչի հիման վրա էլ ձևավորվում է կարգապահական վարույթների նկատմամբ հանրային վստահությունը:

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ Բարձրագույն դատական խորհրդի որոշմանը ներկայացված են օրենսդրական պահանջներ[47]: Մասնավորապես, որոշումը բաղկացած է ներածական, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Ներածական Մաս

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Բարձրագույն դատական խորհրդի որոշման ներածական մասում նշվում են՝ Բարձրագույն դատական խորհրդի անվանումը և կազմը, Բարձրագույն դատական

[47] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 155:

խորհրդում հարցի քննության վայրը և ժամանակը, այն դատավորի անունը, ազգանունը և պաշտոնը, որի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, վարույթը հարուցած մարմնի անունը, ազգանունը և պաշտոնը, գործին մասնակցող անձանց անունը, ազգանունը:

Նկարագրական-պատճառաբանական մաս

Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Բարձրագույն դատական խորհրդի որոշման նկարագրական-պատճառաբանական մասում համառոտ նշվում են՝ հարցի քննության համար էական նշանակություն ունեցող հանգամանքները, վարույթը հարուցած մարմնի դիրքորոշումը, այն դատավորի բացատրությունները և դիրքորոշումը, որի նկատմամբ վարույթ է հարուցվել, այն անձանց բացատրությունները, ցուցմունքները, որոնք հրավիրվել են Բարձրագույն դատական խորհրդի նիստին, կարգապահական խախտման մասին Բարձրագույն դատական խորհրդի հետևությունները, դատավորի անձը բնութագրող հանգամանքները, այն ապացույցները, որոնց վրա հիմնված են Բարձրագույն դատական խորհրդի հետևությունները, ինչպես նաև այս կամ այն ապացույցն անարժանահավատ համարելու փաստարկները, նորմատիվ իրավական ակտի այն նորմերը, որոնցով Բարձրագույն դատական խորհուրդը ղեկավարվել է որոշում ընդունելիս, կողմերի դիրքորոշման վերաբերյալ պատճառաբանություններ:

Եզրափակիչ մաս

Բարձրագույն դատական խորհրդի որոշման եզրափակիչ մասում նշվում է Բարձրագույն դատական խորհրդի եզրահանգումը, ինչը ենթադրում է Խորհրդի կողմից վարույթով ներկայացված փաստերի հիման վրա արարքի որակումն ու ըստ այդմ վերջնական որոշման կայացումը, որը պետք է բխի այդ փաստերից և իր ծանրությամբ համապատասխանի հնարավոր խախտման լրջությանը:

Խորհրդի որոշումների ուսումնասիրությամբ փաստվում է, որ վերոգրյալ բոլոր հարցերը այս կամ այն չափով տեղ են գտել որոշումներում՝ կախված կոնկրետ գործի հանգամանքներից և գործի նյութերից:

Դատավորների կողմից կարգապահական խախտումների առկայության կամ բացակայության հիմնավորումները Խորհրդի կողմից ներկայացվել են ինչպես ներպետական օրենսդրության, այնպես էլ միջազգային կարգավորումներով: Մասնավորապես, բոլոր որոշումների մեջ կիրառվել է ՀՀ Սահմանադրությունն ու Դատական օրենսգիրքը, կախված գործի բնույթից՝ նաև ոլորտային առանձին օրենսդրական նորմեր: Կիրառվել են նաև Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ

դատարանի նախադեպերը։ Բոլոր դեպքերում Խորհուրդը կիրառել է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և Եվրոպական դատարանի դատական ակտեր, կախված քննարկվող հարցից՝ կիրառվել են նաև այնպիսի միջազգային նորմեր և սկզբունքներ ինչպիսիք են Բանգալորյան սկզբունքները, ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից 1985 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 40/32 և 1985 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 40/46 բանաձևերով հաստատված՝ «Դատական մարմինների անկախության հիմնարար սկզբունքները» և դրա հավելված՝ ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի կողմից թիվ 2200A (XXI) բանաձևով 22 հաստատված «Դատավորների վարքագծի բանգալորյան սկզբունքները», «Դատավորների կարգավիճակի մասին» 1998 թվականի հուլիսի 10-ի Եվրոպական խարտիան և Եվրոպական խարտիայի պարզաբանման հուշագիրը, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2010 թվականի նոյեմբերի 17-ի՝ «Դատավորների անկախության, գործունեության արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ CM/Rec(2010) 12 հանձնարարականը, Եվրոպական Դատավորների Խորհրդատվական խորհրդի և Վենետիկի հանձնաժողովի մի շարք եզրակացություններ ու զեկույցներ և այլն։

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլոր այն դեպքերում, երբ դատավորները ներկայացրել են բացատրություններ և միջնորդություններ, դրանք արտացոլվել են Խորհրդի որոշումներում։

3.2 Մեղքի ձևի որակում և հիմնավորում

Խորհրդի որոշման հիմնավորվածության կարևոր տարրերից մեկը կարգապահական խախտման մեղքի ձևի որակումն է։

Դատական օրենսգիրքը այս առումով սահմանում է, որ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայության ապացուցման պարտականությունը կրում է կարգապահական վարույթ հարուցած մարմինը։ Կարգապահական խախտման համար դատավորը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշմամբ։ Դատավորի կողմից կատարված կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են դատավորի օգտին[48]։ Ավելին, դատավորը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում։

Այս համատեքստում, նախ, պետք է նշել, որ դիտարկված բոլոր վարույթներով Խորհուրդը անդրադարձել է մեղքի հարցին ու առկայությանը կամ բացառել այն, առկայության դեպքում անդրադարձել է նաև մեղքի ձևին։

[48] ՀՀ Դատական օրենսգիրք, հոդված 143։

Դիտարկված վարույթներով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ բոլոր 9 որոշումներով Խորհրդի կողմից դատավորի արարքը որակվել է որպես կոպիտ անփութությամբ կատարված։

Մյուս երեք վարույթներով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունները մերժվել են, և ըստ այդմ՝ մեղքի ձևին անդրադարձ չի կատարվել։

Վարույթներից մեկով Խորհուրդը դատավորի կարգապահական խախտումը՝ Արդարադատության ակադեմիայի տարեկան պարտադիր վերապատասրաստումը և ինքնաստուգիչ հարցերի պատասխանները մասնակի ներկայացնելը, որակել է նվազ կարևորության և մերժել կարգապահական պատասխանատության ենթարկելու միջնորդությունը՝ հաշվի առնելով այդ դասընթացի նյութի բովանդակությունը, այն հանգամանքը, որ Դատավորն արդեն իսկ նախկինում հաջողությամբ անցել է նույնաբովանդակ վերապատրաստման դասընթացը և արձանագրել, որ իր նվազ կարևորության պատճառով Դատավորի կողմից թույլ տրված արարքը կասկածի տակ չի դնում Դատավորի համապատասխանությունն իր կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը։

Դատավորի քննարկվող արարքը նվազ կարևոր համարելու առումով կարևոր նշանակություն է տրվել այն հանգամանքին, որ Դատավորը դասավանդում է Հայաստանի Ֆրանսիական համալսարանում, նույն դասընթացի կայացման ժամանակահատվածում մասնակցել է պարտադիր վերապատրաստման դասընթացներին և միաժամանակ իր պաշտոնավարման ընթացքում մասնագիտական պատրաստվածության ու հմտությունների շարունակական կատարելագործման ապահովման նպատակով մասնակցել է գիտական, կրթական միջոցառումների։ Խորհուրդը նշել է նաև, որ «դատավորի արարքը որևէ մեկի համար որևէ բացասական իրավական հետևանք չի առաջացրել, և հաշվի առնելով Դատավորի՝ պարբերաբար տարբեր դասընթացների և միջոցառումների մասնակցելը, ինչն էականորեն նվազեցնում է հանրային ընկալումը Դատավորի՝ տվյալ արարքով իր կարգավիճակին չհամապատասխանելու վերաբերյալ, ուստի Խորհուրդը գտնում է, որ դատավորի կողմից թույլ տրված արարքն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում նրա համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի հեղինակազրկում դատական իշխանությունը»։

Մեկ այլ վարույթով Խորհուրդն արձանագրել է դատավորի կողմից մեղքի բացակայություն։[49] Տվյալ գործով Դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական ժամկետների խախտում, ինչը դատավորը բացատրել է իր կյանքում տեղի ունեցած

[49] Բարձրագույն դատական խորհուրդ,ԲԴԽ-51-Ո-Կ-5 որոշում։

բացառիկ իրադարձություններով, այն է՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում մահացել է որդին, այնուհետ վախճանվել է հայրը, իսկ իր մոտ ի հայտ են եկել առողջական խնդիրներ: Խորհուրդը սույն գործով գտել է, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումը կատարվել է մեղքի բացակայությամբ, ինչը բացառում է Դատավորի նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցի կիրառումը:

Մյուս դեպքում Խորհուրդը կարգապահական խախտում չի գտել, ըստ այդմ՝ մեղքին անդրադարձ չի կատարվել[50]: Տվյալ գործի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ դատավորը կայացրել է կալանավորված անձ Դավիթ Տոնոյանին քրեակատարողական հիմնարկից կարճաժամկետ մեկնում տրամադրելու վերաբերյալ որոշում, սահմանել է ինչպես մեկնման ժամանակի, տևողության և վայրի, այնպես էլ վերադարձի համար անհրաժեշտ ժամանակի, նաև մեկնման եղանակի հետ կապված հարցերը: Մասնավորապես, դատարանը սահմանել է 2 ժամ տևողությամբ ժամանակ՝ քրեակատարողական հիմնարկ վերադարձի համար, որի ընթացքում թույլատրել է նաև կալանավորված անձի տեսակցությունը մոր հետ: Դատարանն անհրաժեշտ է համարել կալանավորված անձի մեկնումն իրականացնել քրեակատարողական հիմնարկի վարչակազմի մեկ ներկայացուցչի ուղեկցությամբ, սակայն սահմանել է նաև, որ մեկնումը պետք է իրականացվի առանց ձեռնաշղթայի կիրառման:

Սույն գործով Խորհուրդն արձանագրել է, որ «*Լիազոր մարմնի կողմից, ինչպես ներկայացված միջնորդությամբ, այնպես էլ վարույթի քննության շրջանակներում չի հիմնավորվել այն, որ Դատավորն արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ թույլ է տվել նյութական և/կամ դատավարական իրավունքի նորմի խախտման հատկանիշներ պարունակող արարք, հետևաբար դատավարական իրավունքի նորմի խախտմամբ դրսևորված և Օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված վարքագծի կանոնի խախտման հանգեցրած նյութական իրավունքի նորմի խախտման գոյությունը հերքված լինելու պարագայում Դատավորի կողմից թույլ տրված արարքում մեղքի առկայության հարցի պարզումը և մեղքի ձևի գնահատումը դարձել է ոչ նպատակահարմար, հետևաբար Խորհուրդը դրանց չի անդրադարձել*»:[51]

Կոպիտ անփութությամբ կատարված որակված խախտումների գրեթե բոլոր դեպքերում Խորհուրդը, նախ, տվել է մեղքի ընդհանուր սահմանումը, այն ներկայացնելով հետևյալ կերպ՝ դատավորի կարգապահական պատասխանատվության տեսանկյունից մեղքը

[50] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-70-Ո-Կ-9 որոշում:
[51] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-70-Ո-Կ-9 որոշում:

դատավորի վերաբերմունքն է իր կողմից կատարված արարքի և դրա հետևանքների նկատմամբ։

Ինչ վերաբերում է կոնկրետ արարքի փաստական հանգամանքների համատեքստում մեղքի որակմանը, ապա այն տարբեր գործերով տարբեր դրսևորումներ է ստացել, սակայն որպես ընդհանուր վերհանում պետք է արձանագրել, որ Խորհրդի որոշումը մեղքի որակմանը հիմնականում սահմանափակ և թերի հիմնավորումներ է տալիս։

Այսպես, մեղքի որակումն ու մեղքի ձևի հիմնավորվածությունը Խորհրդի որոշումներով արտահայտվել է հետևյալ կերպ, օրինակ՝

- «Գնահատելով դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտման ակնհայտությունը՝ Խորհուրդն արձանագրում է, որ […] դատավորի վարքագծի կանոնների խախտմանը հանգեցրած դատավարական իրավունքի նորմերի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ, քանի որ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել»[52]։
- «Գնահատելով դատավորի կողմից թույլ տրված դատավարական իրավունքի նորմերի խախտման ակնհայտությունը՝ Խորհուրդն արձանագրում է, որ Դատավորին մեղսագրվող դատավարական նորմի խախտումների առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկներով և Խորհրդի գնահատմամբ Դատավորը ոչ իրավաչափ գործողություններով հեղինակազրկել է դատական իշխանությունը՝ էապես նվազեցնելով դատական իշխանության նկատմամբ հանրության վստահությունը և վնասելով դատավորի բարձր պաշտոնի հանրային ընկալմանը։ Խնդրո առարկա դատական գործերի շրջանակներում կիրառելի իրավանորմերի հստակությունը և իմպերատիվ բնույթը թույլ է տալիս եզրակացնել, որ Դատավորն ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր տեղյակ լինել վերաբերելի իրավակարգավորումներին և դրանք խախտելու հնարավոր հետևանքներին, հատկապես, որ դատավորի նկատմամբ Խորհրդի կողմից երկու անգամ հայտարարվել է նկատողություն։ Նշվածը թույլ է տալիս ողջամտորեն եզրահանգել, որ դատավորի կողմից վերոնշյալ դատավարական նորմի խախտումները կատարվել են կոպիտ անփութությամբ»[53]։
- «Խորհուրդը գտնում է, որ դատավորն իրեն վերագրվող խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել, այնքանով, որքանով չի հիմնավորել դատավարական նորմով

[52] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-54-Ո-Կ-6 որոշում։
[53] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշում։

սահմանված դատական ակտերի հրապարակման և ուղարկման, ինչպես նաև կատարողական թերթերը տրամադրելու ժամկետի խախտումները՝ որևէ արդարացված նպատակով»[54]:

- «Խորհուրդը գտնում է, որ դատավորն իրեն վերագրվող խախտումները կատարել է կոպիտ անփութությամբ, քանի որ չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր դա անել»[55]:

Նշված և մյուս վարույթներով ևս լրացուցիչ չի հիմնավորվում, սակայն, թե մասնավորապես ինչ հանգամանքների և հիմնավորումների հաշվի առմամբ է հաստատվել դատավորի կողմից արարքի ոչ իրավաչափ բնույթի գիտակցումը: Ավելին, դատավորի արարքի կատարման մեջ մեղքի վերաբերյալ Խորհրդի կողմից տրված մեկնաբանությունները առավելապես կրում են ընդհանրական բնույթ՝ չտեղայնանալով կոնկրետ գործի փաստերի և ենթադրյալ խախտման անհրաժեշտ հիմնավորումների վրա[56]:

Հարկ է նշել, որ վարույթներից մեկում ներգրավված են եղել 4 դատավորներ: Այս պարագայում Խորհուրդը դատավորների մեղքի առկայությանը և տեսակին անդրադարձել է միասին՝ առանց մեղքն անհատականացնելու: Խորհուրդը նշել է, որ «վարույթով քննարկվող վարչական գործը քննվել է կոլեգիալության կարգով, որպիսի հանգամանքից հետևում է, որ դատավորները «Բողոքը մերժելու մասին» կայացրած որոշմամբ արտահայտել են իրենց դիրքորոշումը ներկայացված հայցադիմումի ընդունելիության վերաբերյալ, հետևաբար դատավորներից յուրաքանչյուրի արարքին առանձին-առանձին անդրադառնալու անհրաժեշտությունը բացակայում է»:

3.3 Կիրառված կարգապահական տույժի տեսակները

Ինչպես նշվեց, ուսումնասիրված 12 վարույթներից 9-ով Խորհրդի կողմից որոշում է կայացվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին, որոնցից 2-ով՝ էական կարգապահական խախտման հիմքով:

Այդ վարույթներից 3-ով Խորհրդի կողմից դատավորներին հայտարարվել է նախազգուշացում, 3 վարույթներով կիրառվել է նկատողություն, 1 վարույթով խիստ նկատողություն կարգապահական տույժերը: Էական կարգապահական խախտման հիմքով դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու 2 վարույթով 2 դատավորների լիազորությունները դադարեցվել են: Մեկ դեպքով՝ ըստ Խորհրդի Դատավորը թույլ է տվել դատավարական ժամկետի խախտումներ՝ գործերով

[54] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-88-Ո-Կ-20 որոշում:
[55] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ- 88-Ո-Կ-19 որոշում:
[56] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-74-Ո-Կ-18, ԲԴԽ-23-Ո-Կ-3, ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշումներ:

վերջնական դատական ակտերի ընդունման և կողմերին ուղարկելու ժամկետները խախտելու ձևով: Ընդ որում, կարգապահական խախտումը թույլ տալու պահին Դատավորն ունեցել է կարգապահական երկու տույժ[57]: Մյուս դեպքով՝ դատավորը թույլ է տվել գործի քննության ողջամիտ ժամկետի և արդյունավետ քննության խախտում՝ գործով առկա վարույթները չառանձնացնելով իրարից[58]:

Գծապատկեր 6. ԲԴԽ կողմից ընտրված կարգապահական տույժի տեսակները.

3.4 Կարգապահական տույժի հիմնավորվածությունը

Դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթների ուսումնասիրությունը մշտապես վեր է հանել դատավորի կողմից կատարված խախտման և ընտրված պատասխանատվության միջոցի միջև համաչափության խնդիրը: Խորհրդի որոշմամբ պատշաճ չի հիմնավորվում տույժի համաչափությունը դատավորին վերագրվող կարգապահական խախտմանը: Չնայած այն հանգամանքին, որ ուսումնասիրված բոլոր վարույթներով Խորհուրդը ընդհանրական ձևով ներկայացրել է այն չափանիշները, որոնք հաշվի են առնվում պատասխանատվության տեսակն ընտրելիս, ինչպիսիք են՝ խախտման բնույթը, հետևանքները, դատավորի մոտ առկա տույժերը, այնուհանդերձ այս

[57] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշում:
[58] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-14-Ո-Կ-05 որոշում:

հանգամանքները հետագայում չեն տեղայնացվում յուրաքանչյուր գործի հանգամանքների համատեքստում և ներկայացվում կոնկրետ տույժի տեսակն ընտրելիս։

9 վարույթներից 3-ով դատավորին հայտարարվել է նախազգուշացում, 3 վարույթներով ընտրվել է նկատողություն, 1-ով խիստ նկատողություն կարգապահական տույժի տեսակը, 2 վարույթով՝ Դատավորի լիազորությունները դադարեցվել են։

Բնականաբար քննարկվող վարույթներից յուրաքանչյուրով առկա են տարբեր փաստական հանգամանքներ, որի հիման վրա և փոխվում է խախտման բնույթը, սակայն Խորհրդի վերջնական որոշմամբ հստակ չէ, թե որ դեպքում և ինչ չափանիշի կիրառմամբ է ընտրվում նախազգուշացում, նկատողություն կամ խիստ նկատողություն տույժի տեսակը։

Օրինակ, վարույթներից մեկով Խորհուրդը գտել է, որ Դատավորը գործով ինքնաբացարկ չհայտնելով, դրսևորել է հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ, թեև տվյալ իրադրությունում ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր ձեռնամուխ լինել կողմի՝ իր հարազատը (հորեղբոր տղան) լինելու հանգամանքը պարզելուն։

Մեկ այլ վարույթով Խորհուրդը հաստատել է դատավորի կողմից դատավարական նորմի խախտման հանգամանքը, քանի որ թույլ է տրվել վարույթում գտնվող գործերի ողջամիտ ժամկետում քննության պահանջի խախտում, միևնույն ժամանակ Խորհուրդն ընդունել է, որ դատավորը գործերի ողջամիտ ժամկետում քննությունն ապահովելու համար ձեռնարկել է որոշակի գործողություններ, մասնավորապես դիմել է Խորհրդին՝ իր անուն-ազգանունը գործերի բաշխման ցանկից ժամանակավորապես հանելու խնդրով, սակայն Խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի ղեկավարի կողմից այն մերժվել է, քանի որ հիմնավոր չի համարվել։ Նույն վարույթով հաստատվել է այնպիսի սուբյեկտիվ հանգամանքի առկայությունը, ինչպիսին է դատավորի երեխայի առողջական վիճակն ու անհրաժեշտ խնամքը։ Ավելին, Խորհուրդը եզրահանգել է, որ թույլ տված խախտումները, ըստ էության, դատավարության մասնակիցների համար որևէ բացասական իրավական հետևանք չեն առաջացրել և չեն բացառել դատավարության մասնակիցների իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը։ Այնուհանդերձ, ներկայացված վարույթներից առաջինով Խորհրդի կողմից ընտրվել է նախազգուշացում պատասխանատվության միջոցը, երկրորդով՝ նկատողություն, որը չնայած վերը նշված հանգամանքներին, իր բնույթով ավելի խիստ է։

Վարույթներից մեկով, որի հարուցման հիմք, ըստ վարույթ հարուցող մարմնի, հանդիսացել է դատավորի կողմից Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքից շեղվելն ու վճիռը թերի պատճառաբանելը, ինչի արդյունքում դատավորը մեղադրյալի

նկատմամբ ընտրված կալանք խափանման միջոցը փոխարինել է տնային կալանքով: Սույն վարույթի շրջանակներում դատավորի նկատմամբ ընտրվել է նախազգուցաշում կարգապահական տույժի տեսակը:

Ձեռնպահ մնալով դատավորի կայացրած որոշման բովանդակության վերլուծությունից, այնուհանդերձ, պետք է նկատել, որ տվյալ վարույթի հիմքում ընկած է դատավորի կայացրած որոշումը և մասնավորապես, ընտրված խափանման միջոցն ու վերջինիս արտահայտած դիրքորոշումը: Նման պարագայում ինչպես վարույթ հարուցող մարմնի, այնպես էլ Խորհրդի կողմից պահանջվում է, որ հարուցվեն այնպիսի վարույթներ, որոնք չեն խաթարի դատավորի անկախությունն ու ինքնուրույն որոշում կայացնելու իրավասությունը՝ ազատ լինելով իրենց ներքին դիրքորոշումների և օրենքի մեկնաբանության մեջ: Իսկ ենթադրյալ դատավարական սխալը նման դեպքում կարող է քննարկման առարկա դառնալ վերադաս բողոքի շրջանակներում:

Վարույթներից մեկով Խորհուրդը հաստատել է դատավորի կողմից քրեական գործը ողջամիտ ժամկետում չքննելու հանգամանքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցնելուն, որի արդյունքում ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել, և քրեական վարույթը կարճվել էր: Արդյունքում խաթարվել է տուժողի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունքի կենսագործումը՝ տուժողին զրկելով դատարանում արդարադատություն գտնելու իրավաչափ ակնկալիքից, և ազդել է նաև դատական իշխանության հեղինակության վրա: Այս գործով Խորհուրդը դատավորի նկատմամբ ընտրել է խիստ նկատողություն պատասխանատվության տեսակը:

Մեկ այլ վարույթով, որի հիմքում եղել է ՄԻԵԴ կողմից արձանագրված խախտումը, Խորհուրդը հաստատված է համարել դատարանի մատչելիության իրավունքի խախտումը, ինչը հայցվորին զրկել է իր իրավունքների պաշտպանությունից, ավելին սույն վարույթով քննարկվել է նաև տվյալ գործի հիմքում ընկած նախագահի համապատասխան հրամանագիրը, դրա հանրային-քաղաքական տարրերն ու գործի հանրային-քաղաքական լինելը, և այն, որ դատավորները զերծ չեն մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց: Այս վարույթով Խորհրդի կողմից ընտրվել է նկատողություն կարգապահական տույժի տեսակը:

Մինչդեռ, եթե ՄԻԵԴ խախտման հիմքով քննարկվող վարույթը համեմատենք նախկինում արդեն իսկ նմանատիպ հիմքով հարուցված վարույթի հետ, ապա պատասխանատվության միջոցի ընտրության օբյեկտիվ չափանիշների վերաբերյալ

մտահոգությունները խորանում են: Մասնավորապես, 2023 թվականին Խորհրդի կողմից քննված նմանատիպ թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-17 վարույթով կրկին հաստատվել է արդար դատաքննության իրավունքի՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում, և դրա արդյունքում դատական իշխանության հեղինակազրկում, սակայն այս վարույթով որոշում է կայացվել դատավորների լիազորությունները դադարեցնել էական կարգապահական խախտման հիմքով[59]:

Խոսելով էական կարգապահական խախտման և դատավորների լիազորությունների դադարեցման մասին՝ պետք է ուշադրություն դարձնել նաև ուսումնասիրված վարույթներով դատավորների լիազորությունների դադարեցման դեպքերին: Ինչպես արդեն ներկայացվել է երկու դեպքում էլ վարույթի հիմքում ընկած է եղել դատավարական ժամկետների խախտումը:

Նախ, պետք է նշել, որ այս վարույթների հարուցումը ինքնին եղել է խնդրահարույց, քանզի օբյեկտիվ դիտորդի մոտ տպավորություն է ստեղծվել վարույթների հարուցման ընտրովիության վերաբերյալ: Մասնավորապես, առաջին վարույթով Դատավորին մեղսագրվել է տասնյակ քաղաքացիական գործերով վերջնական դատական ակտը հրապարակելու և դատավարության կողմերին ուղարկելու դատավարական ժամկետների խախտումներ: Այս տեսակ վարույթներով Դատավորների կողմից մշտապես բարձրացվել է խնդրո առարկա ժամանակահատվածում դատական համակարգի և անհատ դատավորների աշխատանքային գերծանրաբեռնվածության համակարգային խնդիրը, ինչը արձանագրվել է ինչպես Բարձրագույն դատական խորհրդի կողմից, այնպես էլ օրենսդիր մարմնի կողմից՝ հանգեցնելով քաղաքացիական դատավարության օրենսգրքի փոփոխությունների և քաղաքացիական դատարանների բեռնաթափմանն ուղղված օրենսդրական կարգավորումների ընդունման: Չնայած արձանագրված համակարգային գերծանրաբեռնվածության խնդրին, առանձին դատավորների նկատմամբ հարուցվել են կարգապահական վարույթներ, որոնք հանգեցրել են այդ Դատավորների լիազորությունների դադարեցման:

Մասնավորապես, Խորհուրդն արձանագրել է, որ Դատավորի կողմից 79 քաղաքացիական գործերով խախտվել են դատական ակտ հրապարակելու և օրենքով սահմանված կարգով դրա օրինակը գործին մասնակցող անձանց ուղարկելու համար սահմանված դատավարական ժամկետները, ինչի հետևանքով խախտվել են կողմերի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը, ինչպես նաև արդար դատաքննության իրավունքի տարր հանդիսացող՝ իր գործի ողջամիտ ժամկետության քննության իրավունքի իրականացումը: Որպես Դատավորի կողմից թույլ

[59] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-57-Ո-Կ-17 որոշում:

տրված վերը նշված խախտումների հետևանք՝ Խորհուրդն արձանագրել է, որ «վնասվել է արդարադատության շահը և հասարակության առջև հեղինակազրկվել է դատարանի բարձր դերը, իսկ դատական իշխանության հեղինակության պահպանումն ինքնին պայմանավորված է հանրային շահով: Հետևապես, դատարանի հեղինակությունը բարձր պահելու պարտականությունը ժողովրդավարական հասարակությունում յուրաքանչյուր դատավորի պարտականությունն է»:

Դատավորը իր կողմից դատավարական ժամկետների խախտումները պատճառաբանել է այն հանգամանքով, որ դրանք ներառել են «այն ժամանակահատվածը, երբ դատավորներն աշխատում էին բոլորին հայտնի գերծանրաբեռնվածության պայմաններում»: Միաժամանակ, Դատավորը կողմից նշվել է, որ տեղի ունեցած էական օրենսդրական փոփոխությունների դրական արդյունքում նախկին ծանրաբեռնվածության նվազմանը զուգահեռ շարունակել է աշխատել նույն ռճով և խիստ գրաֆիկով, որպեսզի հնարավորություն ունենա սեղմ ժամկետներում ազատվել տարիների ընթացքում ծանրաբեռնվածության պատճառով առաջացած կուտակումներից և փորձել իրականացնել էլ ավելի որակյալ արդարադատություն՝ պահպանելով նաև դատավարական ժամկետները: Ինչին Խորհուրդն արձագանքել է, որ «գերծանրաբեռնվածության փաստի ուժով դատավարական ժամկետների խախտումներ կարող են տեղի ունենալ, մինչդեռ դրանք պետք է լինեն ողջամիտ և արդարացված այնքանով, որ չհանգեցնեն դատավարության մասնակիցների հիմնարար իրավունքների և ազատությունների էական սահմանափակումների և խախտումների: Դատավարական ժամկետների պահպանման օբյեկտիվ անհնարինության պայմաններում, այդուհանդերձ, յուրաքանչյուր դեպքում դատավորները պետք է բացառեն դրանց պահպանման առումով անտարբերության, դատավարության մասնակիցներից և որևէ մեկի նկատմամբ կողմնակալության տպավորության հնարավորությունը, որը կարող է ձևավորվել անկողմնակալ դիտորդի տեսանկյունից»: Խորհուրդը գտել է, որ տվյալ գործով Դատավորի գերծանրաբեռնվածության պատճառաբանությունները «ըստ էության, չեն բովանդակում այնպիսի բացառիկ հանգամանքներ կամ հիմնավորումներ, որոնց հիմքով հնարավոր կլինի տվյալ իրավիճակում Դատավորի կողմից թվով 79 քաղաքացիական գործով կատարված խախտումները համարել արդարացված որևէ ողջամիտ պատճառաբանությամբ:

Խորհուրդը նշել է, որ դատավորին մեղսագրվող դատավարական նորմի խախտումների առկայությունը չի կարող կասկածի տակ դրվել որևէ ողջամիտ իրավական ենթադրությամբ կամ փաստարկներով, ինչպես նաև խնդրո առարկա դատական գործերի շրջանակներում կիրառելի իրավանորմերի հստակությունը և իմպերատիվ բնույթը թույլ է տալիս եզրակացնել, որ Դատավորն ակնհայտորեն կարող էր և պարտավոր էր տեղյակ

լինել վերաբերելի իրավակարգավորումներին և դրանք խախտելու հնարավոր հետևանքներին, հատկապես, որ Դատավորի նկատմամբ Խորհրդի կողմից երկու անգամ հայտարարվել է նկատողություն։

Դատավորի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի ընտրության պատճառաբանության համատեքստում Խորհուրդն արձանագրել է, որ «Դատավորն իր գործողություններում զերծ չի մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, ուստի միջնորդության քննությամբ հաստատված փաստերի հաշվառմամբ, Խորհուրդը գալիս է այն եզրահանգման, որ Դատավորի կողմից թույլ տրված նյութական և դատավարական նորմերի խախտումներն էական կարգապահական խախտումներ են, որոնք համատեղելի չեն դատավորի կարգավիճակի հետ և ակնհայտորեն պայմանավորված են դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով»։ Հետևաբար, Դատավորի լիազորությունները էական կարգապահական խախտման հիմքով դադարեցվել են։ Անհրաժեշտ է նշել, որ ընտրված կարգապահական տույժի առնչությամբ հատուկ կարծիք է ներկայացրել Խորհրդի դատավոր անդամների խմբի կողմից, որին անդրադարձ կկատարվի ստորև։

Դատավորի լիազորությունների դադարեցման հանգեցրած մյուս վարույթի՝ Արդարադատության նախարարի կողմից հարուցման առիթ հանդիսացել է լրատվամիջոցներով տարածված Խորհրդի աշխատակազմ Դատական դեպարտամենտի կողմից պատրաստված տեսանյութը, որն իրենում արդեն իսկ Դատավորի վարքագծի և մեղքի գնահատման տարրեր էր պարունակում և որևէ կերպ չէր բխում Խորհրդի աշխատակազմի լիազորություններից։

Սույն վարույթով Խորհուրդն արձանագրել է, որ Դատավորն իր վարույթում ունենալով Հայաստանի Հանրապետության դատահիրավական պրակտիկայում ամենակարևոր գործերից մեկը՝ առանձին վարույթներում մեղադրանքների բնույթով և հանցագործությունների սուբյեկտային կազմով իրարից տարբերվող մեղադրանքները չառանձնացնելով, միատեսակ միջնորդությունների ներկայացմամբ և տարբեր անհարգելի պատճառներով մի շարք դատական նիստերին չներկայանալու ձևով դրսևորվող դատավարության մասնակիցների վարքագիծը համաչափ հարկադրանքի միջոցի կիրառմամբ չխափանելով հեղինակազրկել է դատական իշխանությունը և նպաստել քրեական արդարադատության շահի, նպատակի և էության խաթարմանը, ինչն էլ

հանգեցրել է օրենքով սահմանված վաղեմության ժամկետի լրացած լինելու հիմքով Ռոբերտ Քոչարյանի նկատմամբ քրեական հետապնդման դադարեցմանը: Խորհուրդը փաստել է, որ վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով քրեական հետապնդման դադարեցումն արդարադատության իրականացման տեսանկյունից ընդհանրապես, իսկ պետության և հասարակության համար բացառիկ կարևորություն ունեցող քրեական գործերով առավելապես ունենում է բացասական ազդեցություն սոցիալական արդարության տեսանկյունից, քանի որ վաղեմության ժամկետի լրանալու հիմքով քրեական հետապնդման դադարեցման հետևանքով ի վերջո շարունակում են չբացահայտված մնալ քրեական արդարադատության գոյության հիմնական նպատակը հանդիսացող՝ ամբաստանյալների մեղավորության կամ անմեղության հարցերը, դրանից բխող քրեաիրավական հետևանքներով:

Սույն վարույթով Խորհուրդն արձանագրել է, որ Դատավորը գործից մաս չանջատելով, դատավարության մասնակիցների իրավունքի չարաշահման բացահայտ հատկանիշներ պարունակող արարքները համաչափ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմամբ, չխափանելով Արմեն Գևորգյանի՝ ՀՀ-ից որոշակի ժամկետով մեկնելու մասին միջնորդությունները՝ նաև դատական նիստի կայացման հաշվին բավարարելով թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտումներ, որոնք հանգեցրել են առանց արդարադատության շահերը վնասելու՝ ողջամիտ ժամկետում և նվազագույն դատական ծախսերի կատարմամբ առանց դատական իշխանությունը վարկաբեկող, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելու իր իրավասությանը վերապահված գործը քննելու և լուծելու վերաբերյալ դատավորի վարքագծի կանոնի խախտման, ինչով և միաժամանակ Դատարանը զերծ չի մնացել դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրային վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց:

Խորհուրդը գտել է, որ Դատավորի կողմից թույլ տրված դատավարական նորմերի խախտումներն էական կարգապահական խախտումներ են, որոնք համատեղելի չեն դատավորի կարգավիճակի հետ և ակնհայտորեն պայմանավորված են դատական իշխանության անկախության և անաչառության ապահովման, դատական իշխանության հեղինակությունը բարձր պահելու, դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահության և իրավունքի գերակայության ապահովման հանրային շահերով: Ըստ այդմ՝ Դատավորի լիազորությունները դադարեցվել են:

3.5 Բարձրագույն դատական խորհրդի անդամների հատուկ կարծիքները

Ուսումնասիրված 12 որոշումներից 5-ով Խորհրդի անդամների կողմից ներկայացվել է հատուկ կարծիք: Վարույթներից մեկով չնայած ներկայացված չի եղել հատուկ կարծիք, այնուամենայնիվ Խորհրդի անդամներից երկուսը դեմ են քվեարկել որոշմանը:[60]

Վարույթներից մեկով հատուկ կարծիքը ներկայացվել է դատավարական ժամկետի խախտման հիման վրա դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում: Մասնավորապես, Խորհրդի անդամը գտել է, որ Արդարադատության նախարարի կողմից ներկայացրած միջնորդությունը ենթակա էր մերժման: Ըստ Խորհրդի անդամի՝ «...Դատավորին արդարացնող փաստարկները, որոնք Լիազոր մարմնի, ապա նաև Խորհրդի կողմից ընդունվել են, սակայն միջնորդության մեջ և Խորհրդի եզրափակիչ ակտում ըստ էության պատշաճ գնահատականի չեն արժանացել և անտեսվել են, կարող էին ողջամտորեն գնահատվել որպես դատական գործերով իր և տվյալ դատարանի մյուս դատավորների գերծանրաբեռնվածությունն ապացուցող անվիճելի փաստ (համակարգային խնդիր) և Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու իրավաչափության հարցին անհրաժեշտ էր անդրադառնալ դատական գործերով գերծանրաբեռնվածության իրավիճակի, իրեն վերագրված արարքների նկատմամբ Դատավորի հոգեբանական վերաբերմունքի (մեղքի ձևի) և Դատավորին արդարացնող փաստարկների հետ (դրանց հետ ըստ էության համաձայնելու փաստի) համադրման և գնահատման արդյունքներով: Ըստ Խորհրդի անդամի՝ Դատավորին վերագրված դատավարական ժամկետների խախտումները ձևականորեն են պարունակում Դատական օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի՝ վարքագծի կանոնի խախտման հատկանիշներ, իրենց էությամբ դատական իշխանությունը չեն հեղինակազրկել (չէին կարող հեղինակազրկել) և ունեն նվազ կարևորության, որի պայմաններում դատավորը կարգապահական պատասխանատվության չպետք է ենթարկվեր»:[61]

Մեկ այլ վարույթով հատուկ կարծիքը ներկայացվել է դատավոր անդամի կողմից Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքից շեղվելու և վճիռը թերի պատճառաբանելու վերաբերյալ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթի շրջանակներում: Խորհրդի անդամը գտել է, որ ներկայացված վարույթը ենթակա էր մերժման: Ըստ Խորհրդի անդամի՝ Դատավորին տրվել է լսվելու, միջնորդություններ և ապացույցներ ներկայացնելու, իր իրավունքներն անձամբ և ներկայացուցչի միջոցով դատարանում պաշտպանելու իրավունքներ, սակայն

[60] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-2-Ո-Կ-1 որոշում:
[61] Բարձրագույն դատական խորհուրդ,ԲԴԽ-88-Ո-Կ-20 որոշում:

կարգապահական ողջ վարույթը Դատավորի համար չի եղել արդար. կարգապահական վարույթը բացառող բազմաթիվ հանգամանքների առկայության պայմաններում նրան արդարացնող փաստարկները և իրավական դիրքորոշումները վարույթն իրականացնող մարմինների, այդ թվում՝ որպես դատարան հանդես եկած Բարձրագույն դատական խորհրդի կողմից պատշաճ ստուգման և գնահատականի չեն արժանացել, ինչը հանգեցրել է Դատավորին անհիմն կարգապահական պատասխանատվության ենթարկելուն: Ըստ կարծիքի՝ վարույթով առկա չէր և առկա չէ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որևէ հիմք, ավելին, նույնիսկ կարգապահական իրավախախտումը հաստատված (ապացուցված) համարելու պարագայում Դատավորին վերագրված արարքն ունի նվազ կարևորություն, քանզի իր էությամբ չի հեղինակազրկել դատական իշխանությունը և կասկածի տակ չի դրել վերջինիս համապատասխանությունը դատավորի կարգավիճակին:[62]

Հիշեցնենք, որ սույն գործով վարույթը հարուցվել էր Արդարադատության նախարարի կողմից այն հիմքով, որ դատավորը որևէ հիմնավորում չներկայացնելով, շեղվել է նույնանման փաստերով Վճռաբեկ դատարանի՝ դեռևս 2019 թվականի նոյեմբերի 7-ին արտահայտած իրավական դիրքորոշումից՝ այդ կերպ թույլ տալով դատավարական օրենքի նորմի, դրա հետ փոխկապակցված դատավորի վարքագծի կանոնի խախտում, այն է՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը փոխելով տնային կալանքով:

Մեկ այլ վարույթով Խորհրդի անդամը կարծիք է ներկայացրել ՄԻԵԴ վճռի հիման վրա դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթի շրջանակներում: Ըստ Խորհրդի անդամի՝ «առկա էին նախքան Դատավորների նկատմամբ կարգապահական տույժեր նշանակելը քննարկվող օրենքների սահմանադրականությունը ստուգելու և պարզելու նպատակով Սահմանադրական դատարան դիմելու հիմնավոր կասկածներ, ինչը, որպես դատարան հանդես եկող, ձայների մեծամասնությամբ որոշումներ կայացնող Բարձրագույն դատական խորհուրդը չի կատարել, թեև պարտավոր էր: Աներկբա է, որ Օրենքի քննարկվող լրացումներն ու փոփոխությունները Դատավորների իրավական վիճակը վատթարացնող են, քանի որ կարող էին հանգեցնել և փաստացի հանգեցրել են նրանց նկատմամբ կարգապահական տույժ նշանակելուն, ինչը նախորդ՝ իրավախախտման պահին առկա իրավակարգավորման պայմաններում բացառվում էր: Ըստ Խորհրդի անդամի՝ «Լիազոր մարմնի կայացրած որոշումները՝ կարգապահական վարույթ հարուցելու, Դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությամբ Խորհրդին դիմելու վերաբերյալ, ինչպես նաև Խորհրդի եզրափակիչ

[62] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-99-Ո-Կ-22 որոշում:

որոշումը՝ այդ միջնորդությունը բավարարելու մասին, չեն բխել Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների տրամաբանությունից»:[63]

Վարույթներից երկուսով Խորհրդի անդամների կարծիքները վերաբերել են կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ընտրված տույժի տեսակին:[64] Մեկ դեպքով ըստ Խորհրդի անդամի՝ Դատավորին պետք է հայտարարվեր նկատողություն: Հատուկ կարծիքով դատավորները անդրադարձել են ընտրված տույժի տեսակի համաչափության հարցին: Մասնավորապես, նշվել է, որ «դատավորի նկատմամբ կարգապահական տույժի կիրառումն ինքնանպատակ չէ, այն ուղղված է պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև արդարացի հավասարակշռություն ապահովելուն, որպիսի պայմաններում դրա կիրառումը չի կարող կրել ձևական բնույթ, ուստի տույժ նշանակելիս Խորհուրդը պարտավոր է իրավական գնահատման ենթարկել դատավորի կատարած խախտման բնույթը, դրա ծանրությունը և օրենքով նախատեսված մյուս հանգամանքները: Այդ համատեքստում արձանագրվել է, որ դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը համաչափ չէ կատարված խախտմանը և նրա նկատմամբ պետք է նշանակել առավել մեղմ կարգապահական տույժ՝ նկատողության տեսքով»[65]:

Մյուս դեպքով նույնպես Խորհրդի անդամների կողմից տրված հատուկ կարծիքը վերաբերել է տույժի տեսակի ընտրությանը: Մասնավորապես, հատուկ կարծիքով նախ նշվել է, որ դատավորի կողմից դատավարական ժամկետների խախտումը չի կարող որակվել որպես էական և դատավորի պաշտոնի հետ անհամատեղելի արարք: Նշվել է նաև, որ խախտումները թույլ են տրվել այն ժամանակ, երբ դատավորը դեռևս կարգապահական պատասխանատվության ենթարկված չի եղել և կարգապահական տույժ չի ունեցել, այսինքն՝ նշված հիմքով ևս այդ խախտումը չի կարող դիտվել իբրև էական: Ըստ այդմ, հատուկ կարծիք ներկայացրած դատավոր անդամները գտել են, որ Խորհրդի կողմից դատավորի նկատմամբ կիրառվող ամենախիստ կարգապահական տույժը համաչափ չէ կատարված խախտմանը և նրա նկատմամբ պետք է նշանակել առավել մեղմ կարգապահական տույժ՝ խիստ նկատողության տեսքով[66]:

Հատկանշական է, որ ներկայացված բոլոր հատուկ կարծիքները տրվել են Խորհրդի դատավոր անդամների կողմից, ընդ որում՝ առավել հաճախ հատուկ կարծիք տված

---

[63] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-4-Ո-Կ-2 որոշում:
[64] Բարձրագույն դատական խորհուրդ, ԲԴԽ-23-Ո-Կ-3 և ԲԴԽ-61-Ո-Կ-8 որոշումներ:
[65] Հատուկ կարծիք, հասանելի է հետևյալ հղումով՝ https://pdflink.to/e5dbf3d0
[66] Հատուկ կարծիք, հասանելի է հետևյալ հղումով՝ https://drive.google.com/file/d/1PMFMrjbB6uoa8p_qXE811K6g9LbOYBfa/view

դատավորներից Արշակ Վարդանյանը դատավորի պաշտոնից հրաժարականի դիմում էր ներկայացրել:

Ավելին, ինչպես կարելի է նկատել ներկայացված կարծիքների բովանդակությունից, կարմիր թելով անցնում է Խորհրդի կողմից ընտրված պատասխանատվության միջոցի համաչափության հարցը:

4. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատավորների կարգապահական պատասխանատվության գործերի և դատավորների ընթացակարգային իրավունքների ապահովման կարևոր երաշխիքներից մեկը հանդիսանում է բողոքարկման հնարավորությունը, որը թույլ կտա վիճարկել Խորհրդի որոշումը:

Այս հարցը տարիներ ի վեր բարձրացվել է ինչպես դատավորների, այնպես էլ քաղաքացիական հասարակության կողմից: Ըստ էության, Խորհրդի որոշումները բովանդակային առումով բողոքարկման արդյունավետ մեխանիզմ չեն ունեցել և չունեն: 2023 թվականին կատարված օրենսդրական փոփոխություններով այս հարցին փորձ է արվել լուծում տալ, և նախատեսվել է Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով որոշումների բողոքարկման իրավական հնարավորություն:

Մասնավորապես, համաձայն փոփոխությունների՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն իրականացնելու է Խորհրդի 4 անդամ ընդգրկող կազմը: Խորհրդի նշված կազմը յուրաքանչյուր կարգապահական վարույթով լինելու է տարբեր և ընդգրկելու է դատավորների ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված երկուական թեկնածու: Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշման դեմ բերված բողոքի քննությունն իրականացնելու է Խորհուրդը՝ տվյալ կարգապահական վարույթով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության կազմում չընդգրկված անդամների կազմով[67]:

Փոփոխությունների կենսագործումը ենթադրում է Խորհրդի կողմից համապատասխան կազմերը սահմանող կարգն ամրագրող որոշման ընդունում, որը դեռևս ընդունված չէ:

Մինչդեռ 2023-2024 թվականներին տեղի ունեցած դատավորների լիազորությունների դադարեցման դեպքերը ենթադրում էր նաև բողոքարկման արդյունավետ գործիքակազմի անհրաժեշտություն և հնարավոր կիրառում լիազորությունները դադարեցված

[67] Խորհրդարանը երկրորդ ընթերցմամբ քննարկել է մի շարք օրենսդրական նախաձեռնություններ http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=19487&year=2023&month=10&day=24&lang=arm

դատավորների կողմից, սակայն վերջիններս շարունակում են զրկված մնալ նման հնարավորությունից:

Այս առումով որպես օրինակ կարելի է ներկայացնել դեռևս 2023 թվականին անցկացված մեկ վարույթ, որի շրջանակներում Դատավորի լիազորությունները դադարեցվեցին: Մասնավորապես, 2023թ. հուլիսի 3-ին Խորհուրդը որոշեց Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանի լիազորություններն էական կարգապահական խախտման հիմքով դադարեցնել: Խորհրդի որոշումից հետո, Դավիթ Հարությունյանը դիմել էր Սահմանադրական դատարան՝ հայտնելով, որ Խորհրդում իր գործի քննությունը դռնփակ քննելու, ինչպես նաև իրեն դահլիճից հեռացնելու հանգամանքներն ակնհայտ միջամտություն են Սահմանադրությամբ երաշխավորված իր իրավունքների, մասնավորապես՝ արդյունավետ դատական պաշտպանության ու արդար դատաքննության, մասնավոր ընտանեկան կյանքի ու բարի համբավի, ինչպես նաև հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքների նկատմամբ:

Քննելով Դատավորի դիմումը, Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ հրապարակայնության սկզբունքը կարող է սահմանափակվել միայն խիստ անհրաժեշտ և հատուկ հանգամանքների առկայության պարագայում: Դատական նիստի դռնփակ լինելը չպետք է քողարկող միջոց հանդիսանա «ստվերային արդարադատության» իրականացման համար[68]:

Սահմանադրական դատարանն իր որոշմամբ նշել է, որ Դատավորի կողմից կատարված արտահայտությունները, որոնք հիմք էին հանդիսացել կարգապահական վարույթ հարուցելու համար, արդեն իսկ հանրայնացվել էին՝ տարածվելով լրատվամիջոցներով, և հանրությանը հայտնի էին դարձել նախքան կարգապահական վարույթի հարուցումը:

---

[68] Սահմանադրական դատարանի որոշում, Դավիթ Հարությունյանի Դիմումի Հիման Վրա՝ Հայաստանի Հանրապետության Վարչական Դատավարության Օրենսգրքի 101-Րդ հոդվածի 1-Ին Մասի 2-րդ կետի Եվ «Հայաստանի Հանրապետության Դատական Օրենսգիրք» Սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասի՝ հաշվի Առնելով նաեվ նշված դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունները, Սահմանադրությանը Համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, 21 մայիսի 2024թվական
Հասանելի է հետևյալ հղումով՝ https://concourt.am/decision/decisions/6650ab4cd2b72_sdv-1729.pdf?fbclid=IwZXh0bgNhZW0CMTAAAR25u60BClYeJMbgOT-iwAIToBEmSFS6iKSiNYiwe3b0x9FHRY29ylZMzXk_aem_AU3eSBHIQyI_9Hfq7gij7RtbhiRZ7WKmvbuzNWAoJI3WoKS2tYGVxb-GsIxflLQAjpmBgxdKAtfLDunWIXQj7eQu

Ինչ վերաբերում է դատարանի դահլիճից դատավորին հեռացնելուն և գործն առանց նրա ու ներկայացուցիչների քննելուն, ՍԴ-ն արձանագրել է, որ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան, հանդիսանալով անձի՝ դատավարական իրավունքների սահմանափակման ինտենսիվ միջոց, պետք է կիրառվի միայն առանձնահատուկ դեպքերում, երբ ավելի մեղմ դատական սանկցիայի գործադրմամբ անհնար է արդյունավետ կերպով հակազդել վարույթի մասնակցի ոչ իրավաչափ վարքագծին: Խնդրո առարկա նորմի հակառակ ընկալման պարագայում կխեղաթյուրվի դատական սանկցիայի դատավարական առաքելությունը:

Ըստ որոշման՝ *Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի շրջանակներում, հաշվի առնելով խնդրո առարկա իրավահարաբերությունների կարևորությունը, ինչպես նաև դրանց նկատմամբ հանրային արձագանքի զգայունությունը, Խորհրդի կողմից դատական սանկցիաների կիրառումը պետք է տեղ գտնի բացառապես ծայրահեղ անհրաժեշտության պարագայում՝ դատական վարույթներին առաջադրվող սահմանադրահիրավական և դատավարական սկզբունքների խստիվ պահպանմամբ: Դատավորի նկատմամբ «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան Խորհրդի կողմից պետք է մեկնաբանվի և կիրառվի իրավունքների սահմանափակման սահմանադրահիրավական չափանիշների խստիվ պահպանմամբ, ինչպես նաև պետք է գործադրվեն բոլոր հնարավոր ջանքերը դատավորի դատավարական իրավունքների պաշտպանության համար՝ կողմերի հավասարության և դատավորի լսված լինելու իրավունքի ապահովման համատեքստում: Հաշվի առնելով «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիայի կիրառմամբ դատավորի համար առաջացող բացասական հետևանքների ինտենսիվությունը՝ Խորհրդի կողմից պետք է գործարկվեն համարժեք դատավարական լծակներ՝ կողմի լսված լինելու իրավունքի իրացումն ապահովելու համար: Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդար դատաքննության սահմանադրական իրավունքի երաշխավորումը պահանջում է, որ յուրաքանչյուր դեպքում՝ «դատական նիստերի դահլիճից հեռացում» սանկցիայի կիրառման հարցին զուգահեռ, Խորհուրդը միջոցներ ձեռնարկի դատավորի լսված լինելու իրավունքն ապահովելու համար՝ երաշխավորելով դատավորի ներկայացուցչի մասնակցությունը կարգապահական վարույթին, և նույնիսկ նման հնարավորության բացակայության պայմաններում առնվազն ապահովի, որ կողմի դիրքորոշումները, եթե հնարավոր չէ նրա մասնակցությունը վարույթին, ներկայացվեն առնվազն գրավոր կերպով*[69]:

[69] Նույն տեղում

Սահմանադրական դատարանի նշված որոշումից հետո 2024թ. օգոստոսի 20-ին Դավիթ Հարությունյանը դիմել է Խորհրդին՝ խնդրելով վերանայել Խորհրդի 3 հուլիսի 2023թ. որոշումը: Հատկանշական է, որ թեև Խորհուրդը որոշում է ընդունել այս անգամ նիստերն անցկացնել դռնբաց, սակայն որոշում է կայացվել վարույթի քննությունն անցկացնել գրավոր ընթացակարգով, ինչ պայմաններում ևս չի պահպանվել վարույթի հրապարակայնությունը: Խորհուրդը եզրահանգել է՝ դատավորին պատասխանատվության ենթարկելու որոշումը վերանայման ենթակա չէ[70]: Մինչդեռ, գրավոր ընթացակարգով վերանայման վարույթի պայմաններում Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումն ու դատավորի իրավունքների խախտումները չեն վերականգնվել, և Սահմանադրական դատարանի որոշումը փաստացիորեն մնացել է անկատար:

Միաժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ Դավիթ Հարությունյանի՝ վերանայման վարույթի դիմումի հիմքում ընկած է Դատական օրենսգրքի 157-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը, որով նա Խորհրդից խնդրել է համաձայն համապատասխան կարգի վերանայել Խորհրդի 03.07.2023 թվականի թիվ ԲԴԽ-57-Ո-Կ-16 որոշումը: ՀՀ Դատական օրենսգիրքը չի պարունակում վերանայման վարույթի ընթացակարգը կարգավորող դրույթներ: Օրենքի անալոգիայի կիրառմամբ, Խորհրդի կողմից վերանայման վարույթի քննությունը կարգավորող նորմ է ընդունվել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 156.1-րդ հոդվածը, ինչպես նաև Խորհրդի աշխատակարգից բխող համապատասխան հոդվածներն ու իրավակարգավորումները: Սակայն Օրենսգրքի 156.1-րդ հոդվածը վերաբերում է բացառապես Խորհրդի որոշումների դեմ ներկայացված բողոքների քննման և դրանց վերաբերյալ որոշումների կայացման վերաբերյալ ընթացակարգին, որն իրականացվում է հիմնականում գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ Խորհուրդը գտնում է, որ անհրաժեշտ է բողոքի քննությունը անցկացնել նիստում: Այսպիսով, Դավիթ Հարությունյանի դիմումը վերաբերել է այնպիսի վարույթի, որը ուղղված կլիներ Խորհրդի կողմից կայացված որոշման՝ նոր հանգամանքի հիմքով վերանայմանը, այլ ոչ Խորհրդի որոշման բողոքարկմանը, ինչը ենթադրում է տարբեր իրավական նորմեր և ընթացակարգեր՝ հաշվի առնելով այն բոլոր գործոնները, որոնք Խորհրդի կողմից նախկինում կայացված որոշմամբ հաշվի չեն առնվել: Թեև Դատական օրենսգրքի 156.1-րդ հոդվածը վերաբերում է կարգապահական վարույթների վերաբերյալ բողոքների քննությանը, և տվյալ դեպքում՝ հաշվի առնելով Սահմանադրական դատարանի կողմից արձանագրված խախտումները նշված

[70] https://www.azatutyun.am/a/nakhkin-datavor---bdkh-hakamartutyuny-nor-tap-e-havaqum/33173534.html

ընթացակարգով քննությունը ըստ էության Սահմանադրական դատարանի որոշման դրույթների կատարում համարվել չի կարող։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ վարույթների մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս առկա են մտահոգություններ, որոնցով պայմանավորվում է դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի նպատակային կիրառումն ու դատավորների անկախությունը։

Նախ պետք է արձանագրել, որ առկա են մտահոգություններ և խնդիրներ, որոնք շարունակական են և արձանագրվել են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից նաև նախորդ տարիների ընթացքում դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու պրակտիկայի մշտադիտարկման և ուսումնասիրության շրջանակներում, և որոնց շուրջ ներկայացվել են առաջարկություններ։

Խոսելով կրկնվող և Կազմակերպության կողմից նախկինում ևս բարձրացված խնդիրների մասին, պետք է արձանագրել, որ մտահոգիչ է շարունակում մնալ վարույթի հարուցման փուլի ոչ հրապարակային լինելը՝ ներառյալ վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին ներկայացվող դիմումները, դրանց վերաբերյալ կայացված որոշումները, այդ թվում՝ վարույթ չհարուցելու, հարուցված վարույթը կարճելու, ու այդ մարմինների կողմից Խորհրդին ներկայացվող միջնորդությունները։ Այս փուլի հրապարակային լինելը և տվյալների հասանելիությունը հնարավորություն կտա վեր հանել ներկայացվող դիմումների բնույթն ու էությունը, առավել հաճախ բարձրացվող խնդիրների տեսակները, ներկայացնող սուբյեկտների շրջանակը, ինչպես նաև վարույթ հարուցող մարմնի կողմից այդ դիմումներին ընթացք տալու պրակտիկան։ Նմանապես կարևոր է վարույթ հարուցող մարմինների կողմից Խորհուրդ ներկայացվող միջնորդությունների ամբողջական հրապարակումը, վերջիններիս հիմնավորումներն ու որակումները։ Ներկայումս այդ միջնորդություններին հնարավոր է ծանոթանալ Խորհրդի վերջնական որոշմամբ, որտեղ վարույթ հարուցող մարմնի դիրքորոշումն ու վերհանումները յուրաքանչյուր գործով ներկայացվում է այս կամ այն չափով, սակայն ամբողջական տեղեկությունը չի ներառվում։

Խոսելով վարույթի հարուցման մասին, պետք է նշել սրա հետ կապված մեկ այլ մտահոգություն ևս՝ հատկապես Արդարադատության նախարարի կողմից ՄԻԵԴ վճռի

ուսումնասիրության հիման վրա հարուցվող վարույթների առնչությամբ: Նախ հստակ չէ, թե ինչ չափանիշի և ընթացակարգի հիման վրա է տեղի ունենում ՄԻԵԴ դատական ակտերով խախտումների հիման վրա կարգապահական վարույթների հարուցումը:

Շարունակում է մտահոգիչ մնալ վերը նշված դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցվող վարույթների պրակտիկան: Թեև դատավարական ժամկետների խախտումները իրապես խնդրահարույց են և անթույլատրելի, միևնույն ժամանակ, սակայն, նման խախտումները վեր են հանդում դատավորների ծանրաբեռնվածության համակարգային խնդիրներ, որոնք առաջին հերթին պահանջում են համալիր միջոցառումներ, այլ ոչ սոսկ դատավորների նկատմամբ պատժողական քաղաքականության կիրառում: Հատկապես այն պարագայում, երբ հստակ չէ, թե ինչ ընտրանքով են այս հիմքով դատավորների նկատմամբ վարույթներ հարուցվում, քանզի դատավարական ժամկետների պահպանումն ու ողջամիտ ժամկետներում գործերի քննության խնդիրը ՀՀ արդարադատության համակարգի լրջագույն մարտահրավերներից է:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ երբեմն հարուցված վարույթի հիմքում ընկած են իրավական ոլորտի և, մասնավորապես, պրակտիկայի առավել խորքային խնդիրներ, որոնք պահանջում են ոլորտի համալիր ուսումնասիրություն և ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկայի վերանայում: Նման իրավիճակներում դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վարույթը գոյություն ունեցող խնդիրների մեկ հատվածն է միայն արտացոլում: Նման օրինակ հանդիսանում են դեպքերը, երբ դատական գործի սխալները կապվում են նոտարական գործողությունների և հետագայում նաև դրա հիման վրա դատավորի կողմից օրենքի մեկնաբանության և պրակտիկայի ձևավորման հետ: Ասվածը միանշանակ չի պնդում, որ դատավորները նման իրավիճակում ձեռնպահ են սխալներից, սակայն անհրաժեշտ է համալիր ուսումնասիրության ենթարկել դրա հիմքում ընկած բոլոր հանգամանքներն ու կարգավորումները՝ ինչը կարող է նաև կանխարգելիչ դեր ունենալ:

Ինչպես երևաց ուսումնասիրությունից, դեռևս շարունակում է խնդրահարույց մնալ նաև Խորհրդի կողմից արարքի որակումը, մեղքի ձևի ու ընտրված պատասխանատվության միջոցի հիմնավորումը: Շարունակում է խնդրահարույց մնալ դատավորի կողմից կատարված խախտման համար կարգապահական տույժի կոնկրետ տեսակի ընտրության հիմնավորվածության և համաչափության հարցը, քանզի որոշումներով ներկայացվող հիմնավորումները անբավարար են կամ դրանք առհասարակ բացակայում են: Այս առումով մտահոգիչ շրջանակում քննարկվում է մեկից ավելի դատավորների

կարգապահական պատասխանատվության պատասխանատվության հարցը, մեղքի անհատական որակման բացակայությունը:

Շարունակում է խնդրահարույց մնալ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների բողոքարկման իրավունքի ապահովման հարցը, քանի որ դեռևս չի ներդրվել կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշումների բողոքարկման արդյունավետ մեխանիզմ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վարույթ հարուցող մարմնին

- Ապահովել վարույթ հարուցելու փուլի հրապարակայնությունը՝ երաշխավորելով դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին ներկայացվող դիմումների և վերջիններիս որոշումների հրապարակայնությունը՝ նախատեսելով դատավորների անհատական տվյալների պաշտպանության մեխանիզմներ:
- Ձևավորել միասնական պրակտիկա ՄԻԵԴ կայացրած ակտի ուսումնասիրության և առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերման հիմքով հարուցված վարույթների առնչությամբ՝ ապահովելով այս ուսումնասիրություններով կայացված որոշումների հրապարակայնությունը և բացառելով կարգապահական վարույթների ընտրովիությունը:

Բարձրագույն դատական խորհրդին

- Պրակտիկայում երաշխավորել Բարձրագույն դատական խորհրդի որոշումների պատշաճ հիմնավորվածությունը, մասնավորապես՝ դատավորի արարքի որակման, մեղավորության կամ մեղքի ձևի, ինչպես նաև նրա նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի տեսակի համաչափության վերաբերյալ ներկայացնել հստակ և բավարար պատճառաբանություններ և հիմնավորումներ:
- Պրակտիկայում ապահովել բոլոր որոշումներում դատավորի կողմից կարգապահական տույժ ունենալու և/կամ չունենալու հանգամանքի վերաբերյալ տեղեկության առկայություն:
- Ապահովել Խորհրդի կողմից քննվող բոլոր կարգապահական վարույթների հեռարձակումը:

ՀՀ Արդարադատության նախարարություն և Ազգային ժողով

- Օրենսդրությամբ ապահովել Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի կազմում ոչ դատավոր անդամների թվակազմի ավելացումը և նրանց ընտրության օբյեկտիվ և թափանցիկ ընթակարգը:
- Օրենսդրությամբ նախատեսել և ներդնել Բարձրագույն դատական խորհրդի դատական ակտերի բողոքարկման արդյունավետ մեխանիզմ: